



# "ՀՀ Արմավիրի մարզ, Մոսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցի նոր մասնաշենքի կառուցում" աշխատանքային նախագծի

## Ճրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Փետրվար, 2022թ.

Պատվիրատու՝  
ՀՀ Քաղաքաշինության կոմիտե

Մշակող՝  
"ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս" ՍՊԸ



ATMS Solutions

"ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս"  
ՍՊԸ Հայաստան, Երևան,  
0051 Գրիբոյեդովի 11-1  
Բջջ. +37499 109495  
info@atms.am, www.atms.am



"ՀՀ Արմավիրի մարզ, Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցի նոր մասնաշենքի կառուցում" աշխատանքային նախագիծ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

## "ՀՀ Արմավիրի մարզ, Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցի նոր մասնաշենքի կառուցում"


### ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ

### Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

"ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս" ՍՊԸ տնօրեն

Ա. Տեր-Թորոյան

"18" փետրվարի 2022թ.



"ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս" ՍՊԸ

Հայաստան, Երևան, 0051

Գրիբոյեդովի 11-1

Բջջ.՝ +37499 109495

info@atms.am

www.atms.am



### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	4
2.	ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ.....	4
3.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ .....	5
4.	ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ.....	5
5.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ.....	6
6.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	9
6.1	Նախատեսվող գործունեության հողատարածքը .....	11
6.2	Դպրոցի կառուցման աշխատանքների տեխնիկական բնութագիրը .....	12
6.3	Հողային աշխատանքներ .....	22
6.4	Աշխատանքների իրականացման ժամանակացույցը.....	22
6.5	Թափոնների առաջացումը .....	23
6.6	Վտանգավոր նյութերի և հողային զանգվածի պահումը .....	23
7.	ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ .....	24
8.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	26
8.1	Նախատեսվող գործունեության տարածաշրջանի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և ռելիեֆը .	26
8.2	Տարածաշրջանի երկրաբանությունը և հիդրոերկրաբանությունը .....	27
8.3	Մեյամատեկտոնիկ պայմանները.....	28
8.4	Տարածաշրջանի հողերի նկարագիրը.....	28
8.5	Կլիման և օդերևութաբանական պայմանները .....	29
8.5.1	Ջերմաստիճանը .....	30
8.5.2	Խոնավությունը .....	30
8.5.3	Մթնոլորտային տեղումները.....	30
8.5.4	Քամի .....	31
8.6	Տարածաշրջանի հատուկ պահպանվող տարածքները .....	32
8.7	Նախատեսվող գործունեության տարածաշրջանի բուսական աշխարհը .....	33
8.8	Նախատեսվող գործունեության տարածաշրջանի կենդանական աշխարհը .....	35
8.9	Նախատեսվող գործունեության տարածաշրջանի համայնքների նկարագիրը և սոցիալ տնտեսական վիճակը.....	38
8.10	Պատմամշակութային և բնության հուշարձանները .....	40
8.11	Չգայուն կլանիչներ.....	44
9.	ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.....	44
10.	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ .....	45
	Հավելվածների մաս .....	49



## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

- 1.1 Պատվիրատու՝ ՀՀ Քաղաքաշինության կոմիտե
- 1.2 Ձեռնարկող՝ ՀՀ Քաղաքաշինության կոմիտե
- 1.3 Ձեռնարկողի հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3  
Հեռ. +374 11 62-17-12  
Էլ. փոստ. info@minurban.am
- 1.4 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝ ՀՀ Արմավիրի մարզ, քաղաք Վաղարշապատ, Չվարթնոց թաղամասի Տեր-Գաբրիելյան փողոց թիվ 20, Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոց (Նկար 1)
- 1.5 Աշխատանքային նախագծի մշակող՝ "Հազարաշեն" ՍՊԸ (գլխավոր կապալառու)  
"Նորաշեն" ՆՏ ԱԿ (ենթակապալառու)
- 1.6 "Հազարաշեն" ՍՊԸ հասցեն՝ ՀՀ, Երևան, Պարույր Սևակի փող., 1 շենք, ձախ թև, 1-ին հարկ  
Հեռ. +374-60-623560, +374-91-018769  
Էլ. փոստ. hazarashen@mail.ru
- 1.7 Նախնական գնահատման հայտի մշակող՝ "ԷՅ ԹԻ ԷՍ ԷՍ Սոլյուշնս" ՍՊԸ

## 2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

- ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն
- ՍՊԸ՝ Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն
- ՊՈԱԿ՝ Պետական ոչ առևտրային կազմակերպություն
- ՇՄԱԳ՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
- ԲՊՄՄ՝ Բնության պահպանության միջազգային միություն
- ՊՎԹ՝ Պոլիվինիլբլորիդ
- ԳՀՀ՝ Գլխավոր հողանցման հաղորդաթիթեղ
- ՏԵԿ՝ Տրանսֆորմատորային ենթակայան

### 3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի կողմից կնքված նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի ֆինանսավորման շրջանակներում նախատեսվում է վերակառուցել Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցը: ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի պատվերի հիման վրա՝ Վաղարշապատի քաղաքապետարանի կողմից 16.11.2020թ.-ին կազմվել է № 228 ծածկագրով ճարտարապետահատակագծային առաջադրանքը (**Հավելված 1**): Արդյունքում, ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և կատարողներ՝ գլխավոր կապալառու "Հազարաշեն" ՍՊԸ-ի և ենթակապալառու՝ "Նորաշեն" ՆՏ ԱԿ-ի միջև 12.03.2020 թ.-ին կնքված թիվ ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/4 պայմանագրի հիման վրա մշակվել է "ՀՀ Արմավիրի մարզ, Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցի նոր մասնաշենքի կառուցում" աշխատանքային նախագիծը:

2014թ.-ի հունիսի 21-ին ընդունված "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն, քաղաքաշինության բնագավառում՝ 1500 մ<sup>2</sup>-ից ավելի կառուցապատման մակերեսով քաղաքաշինական օբյեկտները ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության՝ Գ կատեգորիայի նախատեսվող գործունեության տեսակների համար սահմանված ընթացակարգով:

### 4. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

2021 թվականի փետրվարի 18-ի թիվ 8 գրությամբ, "ՀՀ Արմավիրի մարզ, Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցի նոր մասնաշենքի կառուցում" աշխատանքային նախագծի գլխավոր կապալառուն՝ ՀՀ կառավարության 19.11.2014թ.-ի թիվ 1325-Ն որոշման համաձայն, դիմել է Էջմիածնի համայնքապետարան աշխատանքային նախագծի վերաբերյալ հանրային քննարկումներ կազմակերպելու նպատակով: Արդյունքում, Էջմիածնի համայնքապետարանի կողմից 2021 թվականի փետրվարի 24-ին տրված թիվ 508 գրության համաձայն (տես **Հավելված 8**)՝ Էջմիածնի քաղաքապետարանը իր աջակցությունն է հայտնել Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցի նոր մասնաշենքի կառուցման աշխատանքային նախագծի վերաբերյալ հանրային քննարկման կազմակերպմանը, որի համաձայն՝ սույն թվականի մարտի 5-ին, ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի համայնքապետարանում տեղի է ունեցել Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցի նոր մասնաշենքի կառուցման աշխատանքային նախագծի վերաբերյալ առաջին հանրային քննարկումը: Քննարկման ընթացքում դիտարկվել են Ծրագրում տեղ գտած տեխնիկական և բնապահպանական լուծումները:

Նախատեսվող գործունեության իրականացման վերաբերյալ Էջմիածնի համայնքապետարանի կողմից ստացված նախնական համաձայնությունը ներկայացված է **Հավելված 5**-ում:

## 5. ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏՐ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության հիմնական պահանջները սահմանված են 21.06.2014 թ.-ին ընդունված "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքով: Այն կարգավորում է շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի և նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները:

### "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքը

Օրենքը նկարագրում է Հայաստանում տարաբնույթ ծրագրերի և գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) և բնապահպանական փորձաքննության գործընթացները: Օրենքում օգտագործվող հիմնական սահմանումները բերված են հոդված 4-ում: Օրենքի հիմնական առարկաներն են՝

- Հիմնադրությամբ փաստաթուղթը՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փաստաթղթի (քաղաքականություն, ռազմավարություն, հայեցակարգ, ուրվագիծ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ) նախագիծ:
- Նախատեսվող գործունեությունը՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում:

Օրենքի հոդված 6-ը սահմանում է գնահատման և փորձաքննության նպատակն ու խնդիրները, իսկ հոդված 7-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացում դիտարկվող շրջակա միջավայրի օբյեկտները և բնութագրերը: Օրենքի գլուխ 2-ը (8-13 հոդվածները) նկարագրում են ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացի հիմնական մասնակիցների լիազորությունները:

Հոդված 14-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթերի բնագավառները և նախատեսվող գործունեությունների տեսակները, որոնք ըստ ոլորտների դասակարգվում են Ա, Բ և Գ կատեգորիայի ըստ շրջակա միջավայրի վրա նվազող աստիճանի:

Օրենքի հոդված 16-ի համաձայն նախատեսվող գործունեությունների փորձաքննությունն իրականացվում է երկու փուլով՝ նախնական և հիմնական: Նախնական փուլում կազմվում է նախատեսվող գործունեության գնահատման նախնական հայտը, որի փորձաքննության հիման վրա (Ա կամ Բ կատեգորիայի գործունեության դեպքում) կազմվում է տեխնիկական առաջադրանք, ինչը հիմք է ծառայում ՇՄԱԳ հաշվետվության մշակման համար: Նախնական փորձաքննության տևողությունն է 30 աշխատանքային օր: Եթե փորձաքննության ընթացքում որոշվում է, որ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի, ապա ձեռնարկողին նախնական գնահատման հայտի հիման վրա տրվում է փորձաքննության եզրակացություն:

Հոդված 18-ը սահմանում է հիմնադրությամբ փաստաթղթի ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության և նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության բովանդակու-

թյանը ներկայացվող պահանջները: Հոդված 19-ը նկարագրում է փորձաքննության հիմնական փուլը: Մույն հոդվածի 4-րդ կետի համաձայն փորձաքննության հիմնական փուլի ժամկետները չպետք է գերազանցեն հիմնադրույթային փաստաթղթի և նախատեսվող գործունեության Ա կատեգորիայի դիպքում մինչև 60 աշխատանքային օր, իսկ նախատեսվող գործունեության Բ կատեգորիայի դիպքում մինչև 40 աշխատանքային օր:

Օրենքի հոդված 26-ը սահմանում է ՇՄԱԳ և փորձաքննության ընթացքում հանրային ծանուցմանը և քննարկումների իրականացմանը ներկայացվող պահանջները: Հանրության ծանուցումը իրականացվում է մինչ լուսմները կամ քննարկումները առնվազն 7 աշխատանքային օր առաջ զանգվածային լրատվամիջոցներով, հայտարարություններով և էլեկտրոնային փոստով: Հանրային ծանուցումը և քննարկումները իրականացվում են 19.11.2014 թ.-ի ՀՀ կառավարության "Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին" թիվ 1325-Ն որոշմամբ:

**"Թափոնների մասին"** ՀՀ օրենքը (2004 թ.) սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքի 3-րդ գլուխը նկարագրում է թափոնների նորմավորման, հաշվառման, անձնագրավորման ընթացակարգերը: Օրենքում ներկայացված են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները, ինչպես նաև թափոնների գործածության ոլորտում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի կիրարկումն ապահովվում է մի շարք կառավարության որոշումների և բնապահպանության նախարարի հրամաններով: Մասնավորապես արտադրության և սպառման թափոնների դասակարգումը ըստ վտանգավորության դասի իրականացվում է ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թ.-ի հոկտեմբերի 26-ի "ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին" հրամանի համաձայն:

**"Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին"** ՀՀ օրենքը (2006 թ.) կարգավորում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները: Օրենքը դասակարգում է ՀՀ-ում հատուկ պահպանվող տարածքները. ա) ըստ նշանակության (միջազգային, հանրապետական և տեղական բնության հատուկ պահպանվող տարածքների) և բ) ըստ կատեգորիայի (պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի):

Օրենքը նկարագրում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմները, պահպանության իրականացումը, օգտագործումը և վերահսկողությունը, սահմանում է պետական մարմինների իրավասությունները, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներն օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները:

**"Մթնոլորտային օդի պահպանության մասին"** ՀՀ օրենքը (1994թ.) կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների հարցերը: Մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների թույլտվությունների ստացման կարգը և է



մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները սահմանվում են ՀՀ կառավարության **"Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին"** թիվ 259, **"Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության 1999 թվականի մարտի 30-ի թիվ 192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի թիվ 953-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին"** թիվ 1673-Ն և **"Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների - ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին"** թիվ 160-Ն որոշումներով:

**ՀՀ Հողային օրենսգիրքը** (2001 թ.) սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Համաձայն Օրենսգրքի ՀՀ հողային ֆոնդը դասակարգվում է ըստ հետևյալ կատեգորիաների. 1) գյուղատնտեսական նշանակության, 2) բնակավայրերի, 3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, 4) էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, 5) հատուկ պահպանվող տարածքների, 6) հատուկ նշանակության, 7) անտառային, 8) ջրային և 9) պահուստային հողերի:

**"Բուսական աշխարհի մասին"** (1999 թ.) և **"Կենդանական աշխարհի մասին"** (2000 թ.) ՀՀ օրենքները սահմանում են ՀՀ բույսերի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության ու կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցությունը կարգավորելու քաղաքականությունը: Այս օրենքների հիմնանպատակը բուսական/կենդանական աշխարհի և կենսաբազմազանության պահպանության ապահովումն է: Այն նաև սահմանում է տեսակների՝ մասնավորապես էնդեմիկ և վտանգված, մոնիտորինգի և գնահատման ընթացակարգերը:

**"ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին"** թիվ 71-Ն և **"ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին"** թիվ 72-Ն ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի որոշումները սահմանում են ՀՀ բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ, անհետացած ու անհետացող, կրճատվող, ոնոթոշ տեսակների կենսաբանությունը, թվաքանակը, տարածման վայրերը և ձևաբանությունը:

**"ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին"** ՀՀ կառավարության 31.07.2014թ. թիվ 781-Ն որոշումը սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

**"Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին"** թիվ 1396-Ն որոշումը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում հողի բերրի շերտի (այսուհետ՝ բերրի շերտ) նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները՝ հանումը, տեղափոխումը, պահպանումը և հաշվառումը:





**"Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ.-ի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին"** թիվ 1404-Ն ՀՀ կառավարության որոշումը սահմանում է հողի բերրի շերտի հանման նորմերը և հանված բերրի շերտի պահպանմանն ու արդյունավետ օգտագործմանը ներկայացվող պահանջները՝ հողային աշխատանքներ կատարելիս հողերի պահպանությունն ապահովելու, ցածր արդյունավետություն ունեցող հանդակների բերրիությունը բարձրացնելու և ռեկուլտիվացվող հողերի բերրիությունը վերականգնելու համար:

**"Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին"** թիվ 1589-Ն որոշման մեջ ներկայացված է ՀՀ Արմավիրի մարզի պատմամշակութային հուշարձանների ցանկը:

**"Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին"** թիվ 967-Ն ՀՀ կառավարության որոշում:

**"Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող ժամանակավոր սահմանափակումների և կանոնների վերաբերյալ"** թիվ 253-Ն պարետի որոշում (նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում COVID-19 համավարակի հետ պայմանավորված սահմանափակումների կիրառելի լինելու դեպքում):

## **6. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցի նոր մասնաշենքի կառուցման աշխատանքային նախագիծը մշակվել է ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի՝ Պատվիրատուի և Կատարողների՝ գլխավոր կապալառու "Հազարաշեն" ՍՊԸ-ի ու ենթակապալառու՝ "Նորաշեն" ՆՏ ԱԿ-ի միջև կնքված 12.03.2020 թ.-ի թիվ ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/4 պայմանագրի համաձայն: Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցի նոր մասնաշենքի կառուցման աշխատանքային նախագծի կազման համար հիմք է հանդիսացել Պատվիրատուի նախագծային առաջադրանքը: Աշխատանքային նախագծի համաձայն նախատեսվում է նոր մասնաշենքի կառուցում, ինչը ենթադրում է ամբողջությամբ վերակառուցել Արմավիրի մարզի Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցը (այսուհետ՝ թիվ 10 դպրոց):

Աշխատանքային նախագծով նախատեսվում է դպրոցի նոր մասնաշենքի կառուցումը իրականացնել գործող շենքի տեղում: Գոյություն ունեցող դպրոցի գլխավոր հատակագիծը բերված է **Հավելված 2-**ում:

Թիվ 10 ավագ դպրոցի կառուցվել է 1970 թվականին՝ հարթ տարածքի վրա և մինչ օրս վերանորոգման չի ենթարկվել: Դպրոցը բաղկացած է երկու ուսումնական, մեկ մարզային, մեկ հանդիսությունների մասնաշենքերից, ինչպես նաև դրանք միմյանց կապող անցակառույցից: "Հուսալի Կամար" ՍՊԸ-ի (շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության պետական լիցենզիա թիվ 13763 տրված 08.02.2010թ.) կողմից իրականացվել է համալիր գործիքադիտողական հետազո-

տուրքուն, որի արդյունքում ուսումնասիրվել է դպրոցի տեխնիկական վիճակը: Ուսումնասիրությունների համաձայն դպրոցի մասնաշենքերի վիճակը գտնվում է՝

- Ուսումնական և վարչական մասնաշենքեր - վիճակը բավարար, վնասվածության աստիճանը 2-րդ դաս,
- Մպորտային և հանդիսությունների մասնաշենքեր - վիճակը անբավարար, վնասվածության աստիճանը 3-րդ դաս,
- Անցակառույց - վիճակը բավարար, վնասվածության աստիճանը 2-րդ դաս:

Աշխատանքային նախագծով նախատեսվում է ապամոնտաժել գործող դպրոցը, փոխարենը կառուցելով 7 նոր մասնաշենքեր, ունենալով բոլոր չափանիշներին համապատասխանող, նոր տեխնոլոգիաներով համարված դպրոց: Դպրոցի տարածքի արբանյակային քարտեզը ներկայացված է ստորև **Նկար 1**-ում, իսկ գլխավոր հատակագիծը բերված է **Հավելված 2**-ում: Նախատեսվող գործունեության իրադրային հատակագիծը բերված է **Հավելված 3**-ում:

**Նկար 1. Նախատեսվող գործունեության վայրի տեղակայման արբանյակային քարտեզը**



"Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոց" ՊՈԱԿ-ը և ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանը՝ համաձայն ներկայացված գրությունների, իրենց համաձայնությունն են տվել թիվ 10 ավագ դպրոցի նոր կառուցվող շենքի նախագիծը հաստատելու վերաբերյալ (գրությունները բերված են **Հավելված 4**-ում և **Հավելված 5**-ում):

## 6.1 Նախատեսվող գործունեության հողատարածքը

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Վաղարշապատ քաղաքի, Չվարթնոց թաղամասի Տեր-Գաբրիելյան փողոցի թիվ 20 հասցեում: Աշխատանքային նախագծի համաձայն նախատեսվում է ապամոնտաժել այդտեղ գտնվող թիվ 10 դպրոցի շուրջ 4800 մ<sup>2</sup> մակերեսով շինությունը և փոխարենը կառուցել նոր՝ շուրջ 6100 մ<sup>2</sup> ուսումնական և 40 մ<sup>2</sup> օժանդակ մակերեսներով շինություններ:

Ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի (Հավելված 1)՝ դպրոցի հողատարածքը (անշարժ գույքի վկայական № 2796235) գտնվում է բնակավայրերի հասարակական կառուցապատման գոտում: Դպրոցի կառուցման համար հատկացված հողամասի մակերեսը 18617 մ<sup>2</sup> է, որից՝

- Կառուցապատման մակերես - 4091.8 մ<sup>2</sup>,
- Բարեկարգվող մակերես - 14525.2 մ<sup>2</sup>, այդ թվում՝
  - Անփալտապատ տարածք՝ - 4035 մ<sup>2</sup>,
  - Սպորտային հրապարակ և խաղահրապարակներ - 2115 մ<sup>2</sup>,
  - Կանաչապատում - 5047.2 մ<sup>2</sup>,
  - Գոյություն ունեցող մրգատու այգի - 3328 մ<sup>2</sup>:

**Նկար 2. Նախատեսվող գործունեության տարածքի լուսանկարը՝ առջևի հատվածից**





## 6.2 Դպրոցի կառուցման աշխատանքների տեխնիկական բնութագիրը

Նախատեսվող գործունեության տարածքը՝ Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցը, գտնվում է Վաղարշապատ քաղաքի հյուսիս-արևելյան մասում: Աշխատանքային նախագծի համաձայն, դպրոցի ապամոնտաժման և վերակառուցման աշխատանքների արդյունքում այն կունենա 7 մասնաշենք՝ A, B, C, D, E, F և G, որոնց տեղադիրքերը ներկայացված են **Հավելված 6**-ում:

### Ճարտարապետական մաս

Դպրոցի տարածքը գտնվում է Վաղարշապատ քաղաքի հյուսիս-արևելյան մասում: Տարածքի բացարձակ նիշերը տատանվում են 888.17 մ և 889.59 մ սահմաններում: Դպրոցին հատկացված հողամասի մակերեսը կազմում է 18617 մ<sup>2</sup>:

Նախագծված կառույցը նախագծված է ավագ դպրոցի համար՝ 6-7 զուգահեռ հոսքերով և նախատեսված է 500 աշակերտի համար:

### Կոնստրուկտորական մաս

Դպրոցը բաղկացած է լինելու յոթ կառույցներից (A, B, C, D, E, F և G մասնաշենքերից), որոնք միմյանցից բաժանված են սեյսմիկ կարաններով: B մասնաշենքը երկու հարկանի է, G մասնաշենքը երեք հարկանի, իսկ A, C, D, E, F, մասնաշենքերը մեկ հարկանի են: Մասնաշենքերից յուրաքանչյուրը հատակագծում ունի հետևյալ առանցքային չափերը՝

- A մասնաշենք - 31.4 մ x 16.55 մ (519.67 մ<sup>2</sup>), բարձրությունը՝ 3.9 մ,
- B մասնաշենք - 31.4 մ x 37.3 մ (1171.22 մ<sup>2</sup>), բարձրությունը՝ 3.3 մ,
- C մասնաշենք - 19.6 մ x 16.1 մ (103.24 մ<sup>2</sup>), բարձրությունը՝ 6.1 մ,
- D մասնաշենք - 11.6 մ x 8.9 մ (203.24 մ<sup>2</sup>), բարձրությունը՝ 3.6 մ,
- E մասնաշենք - 16.1 մ x 14.7 մ (236.67 մ<sup>2</sup>), բարձրությունը՝ 3.6 մ,
- F մասնաշենք - 24.5 մ x 16.1 մ (394.45 մ<sup>2</sup>), բարձրությունը՝ 6.1 մ,
- G մասնաշենք - 40.6 մ x 14.7 մ (596.82 մ<sup>2</sup>), բարձրությունը՝ 3.35 մ:

Դպրոցի կառույցների կողմ համակարգերը միաձույլ երկաթբետոնե կոնստրուկցիաներով է: C և F մասնաշենքերի ծածկն իրականացված է պողպատե կոնստրուկցիաներով, որոնք միաձույլ երկաթբետոնե համակարգի հետ աշխատում են համատեղ:

Բոլոր կողմ կոնստրուկցիաներում օգտագործվելու է ծանր լցանյութերով բետոն: Հիմքի նախապատրաստական շերտն իրականացվելու է B12.5 դասի ծանր բետոնից՝ 10 սմ հաստությամբ: Մետաղե կոնստրուկցիաների պողպատի մակնիշները վերցվելու են ըստ մասնագրերի: Պողպատի տարրերի միացումներն իրականացվելու են եռակցումներով՝ Յ50A մակնիշի էլեկտրոդներով: Կողմ համակարգը կոռոզիայից պաշտպանելու համար մետաղե կոնստրուկցիաները պարբերաբար՝ համաձայն գործող շինարարական նորմերի, պատվելու են հակակոռոզիոն նյութերով: Կառուցվող մասնաշենքերի կոնստրուկցիաների նկարագիրը հետևյալն է՝

### A մասնաշենք՝

- կողմ համակարգը - շրջանակակապային միաձույլ երկաթբետոնե, միահարկ, h=3.9 մ,
- հիմնական կոնստրուկցիաներն իրականացված են B25 դասի ծանր բետոնից,

- միաձույլ երկաթբետոնե ժապավենային հիմք - 100x80 սմ (ներբանի խորությունը -2.4 մ),
- միաձույլ երկաթբետոնե սյուներ - 50x50 սմ, 30x30 սմ,
- միաձույլ երկաթբետոնե հեծաններ - 50x50 սմ
- միաձույլ երկաթբետոնե պատեր - 20 սմ,
- միաձույլ երկաթբետոնե ծածկի սալ - 18 սմ,
- տանիքը - հարթ:

#### В մասնաշենք՝

- կրող համակարգը - շրջանակակապային միաձույլ երկաթբետոնե, երկհարկանի, h=3.3 մ,
- հիմնական կոնստրուկցիաներն իրականացված են B25 դասի ծանր բետոնից,
- միաձույլ երկաթբետոնե ժապավենային հիմք - 100x80 սմ (ներբանի խորությունը՝ B-ն -2.0 մ),
- միաձույլ երկաթբետոնե սյուներ - 50x50 սմ,
- միաձույլ երկաթբետոնե հեծաններ - 50x50 սմ,
- միաձույլ երկաթբետոնե պատեր - 20 սմ,
- միաձույլ երկաթբետոնե ծածկի սալ - 18 սմ,
- տանիքը - լանջավոր է՝ կազմակերպված ջրահեռացմամբ:

#### Е մասնաշենք՝

- կրող համակարգը - շրջանակային միաձույլ երկաթբետոնե, միահարկ, h=3.6 մ,
- հիմնական կոնստրուկցիաներն իրականացված են B25 դասի ծանր բետոնից,
- միաձույլ երկաթբետոնե ժապավենային հիմք - 100x80 սմ (ներբանի խորությունը -2.0 մ),
- միաձույլ երկաթբետոնե սյուներ - 50x50 սմ,
- միաձույլ երկաթբետոնե հեծաններ - 50x60 սմ
- միաձույլ երկաթբետոնե ծածկի սալ - 18 սմ,
- տանիքը - հարթ:

#### Բ մասնաշենք՝

- կրող համակարգը - շրջանակակապային միաձույլ երկաթբետոնե, միահարկ, h=6.1 մ,
- հիմնական երկաթբետոնե կոնստրուկցիաներն իրականացված են B25 դասի ծանր բետոնից,
- միաձույլ երկաթբետոնե ժապավենային հիմք և առանձին հիմքեր սյուների տակ-(ներբանի խորությունը -2.0 մ),
- միաձույլ երկաթբետոնե սյուներ - 50x50 սմ, 80x50 սմ,
- միաձույլ երկաթբետոնե պատեր - 30, 20 սմ,
- ծածկը - պողպատե ֆերմաներով է, որոնց վրա տեղադրված են սենդվիչ պանելներ,

#### С մասնաշենք՝

- կրող համակարգը - շրջանակակապային միաձույլ երկաթբետոնե, միահարկ, h=6.1 մ,
- հիմնական կոնստրուկցիաներն իրականացված են B25 դասի ծանր բետոնից,

- միաձույլ երկաթբետոնե ժապավենային հիմք և առանձին հիմքեր սյուների տակ - (ներբանի խորությունը -2.0 մ),
- միաձույլ երկաթբետոնե սյուներ - 50x50 սմ, 80x50 սմ,
- միաձույլ երկաթբետոնե պատեր - 30 սմ, 20 սմ,
- ծածկը - պողպատե ֆերմաներով է, որոնց վրա տեղադրված են սենդվիչ պանելներ,
- տանիքը - լանջավոր է՝ կազմակերպված ջրահեռացմամբ:

#### D մասնաշենք՝

- կրող համակարգը - շրջանակային միաձույլ երկաթբետոնե, միահարկ, h=3.6 մ,
- հիմնական կոնստրուկցիաներն իրականացված են B25 դասի ծանր բետոնից,
- միաձույլ երկաթբետոնե ժապավենային հիմք - 100 x 80 սմ (ներբանի խորությունը -2.0 մ),
- միաձույլ երկաթբետոնե սյուներ - 50x50 սմ,
- միաձույլ երկաթբետոնե հեծաններ - 50x60 սմ
- միաձույլ երկաթբետոնե ծածկի սալ - 15 սմ,
- տանիքը - հարթ:

#### G մասնաշենք՝

- կրող համակարգը - շրջանակակապային միաձույլ երկաթբետոնե, երկհարկանի, h=3.35 մ,
- հիմնական կոնստրուկցիաներն իրականացված են B25 դասի ծանր բետոնից,
- միաձույլ երկաթբետոնե ժապավենային հիմք - 100x80 սմ (ներբանի խորությունը՝ G-ն -2 մ),
- միաձույլ երկաթբետոնե սյուներ - 50x50 սմ,
- միաձույլ երկաթբետոնե հեծաններ - 50x50 սմ
- միաձույլ երկաթբետոնե պատեր - 20 սմ,
- միաձույլ երկաթբետոնե ծածկի սալ - G-ն 18 սմ,
- տանիքը - լանջավոր է՝ կազմակերպված ջրահեռացմամբ:

Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցի կառուցման պատվիրատուի՝ ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի կողմից տրված տեխնիկական առաջադրանքում (տես Հավելված 9-ը) պատասպարանի կառուցման պահանջ չկա, հետևաբար աշխատանքային նախագծում պատասպարանի կառուցում չի նախատեսվել: Սակայն, պատասպարանի անհրաժեշտության հարցը բարձրաձայնվել է նախագծի առաջին հանրային քննարկման ժամանակ և որպես արդյունք սույն նախնական գնահատման Հայտում առաջարկվում է դպրոցի կառուցվող մասնաշենքերի նկուղը/նկուղների մի մասը կահավորել որպես պատասպարաններ: Ակնկալվում է, որ նշված միջոցառումը չի պահանջի էական ֆինանսական ծախսեր և հեշտությամբ կիրառործվի կառուցապատող ընկերության կողմից: Նշվածը, որպես միջոցառում ներառված է սույն Հայտի Գլուխ 10-ում:

Համաձայն տեղամասի ինժեներատեխնիկական պայմանների մասին եզրակացության, նախագծվող կառույցի համար որպես հիմնատակ ծառայող բնահողն ունի հետևյալ բնութագրերը՝

- Ըստ ինժեներատեխնիկական հետազոտման, հիմքերի համար որպես կրող գրունտներ ծառայում են թիվ 3 շերտի գրունտները, որոնք ներկայացնում են ավագ կոպճային,

ճալքարի և կոպիճի, երբեմն գլաքարերի պարունակությամբ մինչև 15%, միջին խտության, երբեմն փուխր, սակավախոնավ:

- Գրունտները ունեն հետեվյալ ֆիզիկամեխանիկական ցուցանիշները -  $\rho=1.70$  տ/մ<sup>3</sup>;  $\phi_H=22$ , ( $c_H=0.00$ ),  $E=16$  ՄՊա (160 կգ/սմ<sup>2</sup>):
- Պայմանական հաշվարկային դիմադրությունը՝  $R_0=0.2$  ՄՊա (2.0 կգ/սմ<sup>2</sup>):
- Գրունտները ըստ սեյսմիկ հատկանիշների պատկանում են II կարգի:
- Ըստ ՀՀՇՆ 20.04 շինարարական նորմերի<sup>1</sup>, տեղանքը գտնվում է 1-րդ սեյսմիկ ազդեցության գոտում:
- Գրունտների սառեցման խորությունը կազմում է 0.6 մ:

### **Ինժեներական մաս**

#### Ջերմամատակարարում

Մասնաշենքերի ջերմամատակարարումն իրականացվելու է տարածքում գտնվող սեփական կաթսայատնից: Ջերմատարը ջուր է՝ T1/T2 և 80-60°C հարաչափերով: Շենքում նախագծված են երկխողովականի, ջերմատարի որոշ հատվածներում փակուղային, իսկ որոշներում համընթաց շարժման սխեմայով, արհեստական շրջանառությամբ ջեռուցման համակարգեր: Ջեռուցման համակարգը բաժանված է 5 կոնտուրի՝

- մասնաշենք B
- մասնաշենք G,
- մասնաշենք C,
- մասնաշենք F,
- մասնաշենքեր A,D,E:

Մայրուղիներն անցնում են առաջին հարկի հատակի միջով: Մայրուղիների վրա նախատեսված են խցանային, կարգավորիչ, հաշվեկշիռ և դատարկման փականներ: Ընտրված են են Kermi ֆիրմայի հարթ ջեռուցիչ մարտկոցները: Կոմֆորտի պայմաններ և էներգախնայողություն ապահովելու նպատակով ջեռուցիչ մարտկոցներին տեղադրվելու են ջերմակարգավորիչ և կարգավորիչ փականներ: Մայրուղիներն ու կանգնակները ջերմամեկուսացվելու են Aeroflex տիպի մեկուսիչով: Ջեռուցման համակարգից օդը հեռացվելու է բարձր կետերից՝ ավտոմատ օդահանների միջոցով: Համակարգի դատարկումն իրականացվելու է ցածր կետերից:

Օդի ներածման սարքավորումների ջերմամատակարարումն իրականացվելու է շենքի ներսում գտնվող բախիչ սանրիկից առանձին խողովակաշարով: Համակարգը փակուղային է: Ջերմատարի հարաչափերն են՝  $T1=80^{\circ}\text{C}$ ,  $T2=60^{\circ}\text{C}$ ,  $\Delta t=20^{\circ}\text{C}$ :

Ներածվող օդի ջերմաստիճանը կարգավորվելու է եռաքայլ փականի միջոցով, ինչն ապահովվելու է էներգիայի զգալի խնայողություն: Էներգիայի խնայողության նպատակով հինական օդի ներածման

<sup>1</sup>ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 20.04 "Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր" շինարարական նորմեր

սարքերում նախատեսված են ռեկուպերատորներ: Համակարգի բարձր կետերում տեղադրվելու են ավտոմատ օդահաններ:

Շենքի ներսում խողովակաշարը իրականացվելու է Beninger ֆիրմայի PPR խողովակներով, որոնք ջերմամեկուսացվելու են Aeroflex տիպի մեկուսիչով:

Խողովակների անցկացումը ծածկի, ներքին պատերի հետ հատման տեղերում իրականացվելու է հրակայուն նյութից պատրաստված գիլգաներով: Հատումներում անցքերի լցափակումը կատարվելու է հրակայունության նորմերին համապատասխանող նյութով: Ջեռուցման համակարգի փորձարկվում է հիդրոստատիկ մեթոդով՝ ըստ СНиП 03.05.01-85:

### Օդափոխություն

Օդափոխության համակարգերը համարված են լինելու էներգիայի վերաօգտագործման ջերմափոխանակիչներով: Օդի ներածումը դասասենյակներ կատարվելու է անմիջապես դասասենյակի պատին տեղադրված ներածման ճաղովանդակով, իսկ արտածումը բնական միապատիկ դասասենյակներից և կենտրոնացված, միջանցքի սկզբնամասից, ամբողջ միջանցքը ծառայեցնելով որպես արտածման խողովակ: Նշված օդափոխության լուծումը հնարավորություն կտա նշանակալից կրճատել օդափոխման խողովակների քանակը և դրանց տեղադրման ծախսը:

Մենյակներում ներածման-արտածման օդաքանակը հաշվարկված է  $40 \text{ մ}^3/\text{ժ}$  և  $60 \text{ մ}^3/\text{ժ}$  յուրաքանչյուր անձի համար, համապատասխանաբար բնական օդափոխման հնարավորությամբ կամ առանց այդ հնարավորության աշխատասենյակների համար: Օդի պատիկությունը պահեստային հատվածներում և միջանցքներում հաշվարկվել է մեկանգամյա: Հանդերձարաններում օդի պատիկությունը ընդունված է հնգապատիկ, իսկ խոհանոցում՝ հաշվարկված է համաձայն խոհանոցային սարքավորումների բնութագրերի:

Ն2, Ն4 և Ն5 ներածման համակարգերը տեղադրված են իրենց սպասարկող տարածքում, առաստաղի տակ: Անհրաժեշտ է ապահովել սպասարկման հորան բոլոր նշված սարքավորումների տակ, ապահովելով մոտեցման հնարավորություն բոլոր սպասարկում պահանջող հատվածներին: Ինչպես նաև սպասարկման հորան պետք է ապահովել բոլոր կանալային օդամուղների համար:

Ընդհանուր տարածքների օդափոխության խողովակները պատրաստվում են "Ն" դասի, СНиП 41-01-2003 ում նշված համապատասխան հաստության ցինկապատ թիթեղով: Ծխահեռացման և հակահրդեհային պաշտպանության օդատարները պատրաստվում են "Պ" դասի, 1.2 սմ հաստությամբ սև մետաղական թիթեղով:

Օդատար խողովակները ջերմամեկուսացվելու են միայն տանիքի հատվածում՝ 3.5 սմ հաստությամբ ապակեբամբակյա ֆոլգայապատ ջերմամեկուսիչով, իսկ ծխահեռացման համակարգում 5.0 սմ հաստությամբ հանքաբամբակով:

Հրդեհ ազդանշանի դեպքում անջատվելու են բոլոր օդափոխության համակարգերը: Այն հատվածներում որտեղ օդատարները հատում են հակահրդեհային սահման ունեցող կոնստրուկցիաները, օդատարները համարվելու են հակահրդեհային փականներով, ապահովելով դրանում հրդեհապաշտպանության ոչ պակաս սահման քան կոնստրուկցիայինն է: Տարանցիկ օդատարների հրդեհադիմացկունության սահմանը ընդունվել համաձայն СНиП 41-01-2003-ի:





Օդատարներում աղմուկի կանխարգելման նպատակով օդի առավելագույն արագությունը սահմանափակվելու է 6 մ/վ -ով՝ ձայնախլացուցիչների տեղադրումով ներածման և արտածման համակարգերում՝ օդամուղից դեպի սպասարկվող հատվածի կողմում: Բոլոր տատանվող համակարգերը տեղադրվելու են հատուկ տատանումների մարիչների վրա:

Տարածքներում կլիմայական պայմանների բավարարման, օդափոխության ջերմամատակարարման համակարգերի անխափան աշխատանքների և էներգիայի խնայողության նպատակներով նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- բարձր էֆեկտիվությամբ ջերմամեկուսիչ նյութերի օգտագործում օդափոխության համակարգերում, արտաքին միջավայրի հետ ջերմափոխանակումը կանխարգելելու նպատակով,
- ռոտորային ջերմափոխանակիչների (ռեկուպերատորների) օգտագործում ներածման-արտածման համակարգերում,
- փոփոխական ջրաքանակի կարգավորմամբ համակարգի կիրառում, հաճախականային կարգավորմամբ պոպմերով,
- օդափոխության համակարգերում բարձր էֆեկտիվությամբ և հաճախականային կարգավորմամբ շարժիչների կիրառում:

Ջրամատակարարում և ջրահեռացում

Ջրամատակարարման համակարգը փակուղային է և բաղկացած է մագիստրալ խողովակներից, կանգնակներից և ճյուղավորումներից: Մագիստրալ խողովակները, ինչպես նաև կանգնակները նախատեսված է իրականացնել DN50-DN65 պողպատե խողովակներով ըստ GOST 10704-91, իսկ կանգնակները և դեպի սանիտարական սարքեր ճյուղավորումները իրականացվելու են պոլիպրոպիլենե խողովակներից de40-de20, PN=0.6 ՄՊա: Սանիտարական սարքերի, սնուցող բոլոր կանգնակների և դեպի սանիտարական սարքեր ճյուղավորումների վրա շահագործման նկատառումներից ելնելով նախատեսված են փականներ: Տաք ջուրը իրականացվելու է էլեկտրական ջրատաքացուցիչների միջոցով: Խողովակների անցկացումը հիմնականում նախատեսված է իրականացնել I-ին հարկի առաստաղի տակով:

Կոյուղու ներքին ցանցը նախատեսված է իրականացնել ինքնահոս՝  $\Phi 50-\Phi 100$ մմ տրամագծի պոլիպրոպիլենե խողովակներով: Կոյուղու հորիզոնական միացումները կատարվելու են թեք ձևավոր մասերով: Կոյուղու կանգնակների վրա նախատեսված են ստուգիչներ՝ կոյուղու համակարգում առաջացած խցանումները վերացնելու նպատակով:

Ջրամատակարարման արտաքին համակարգը նախատեսվում է իրականացնել  $D=89 \times 3.5$ մմ պողպատե խողովակներից: Ջրամիացումն իրականացվելու է նոր կառուցվող ջրամատակարարման հորում հակահրդեհային հիդրանտով: Նախատեսվում է նաև կառուցել ջրաչափական հոր և պոմպակայան: Ջրագծի ընդհանուր երկարությունը կազմվելու է 75 մ:

Ջրահեռացման արտաքին համակարգում նախատեսվում է կառուցել կոյուղագիծ  $\Phi 150$ մմ պոլիէթիլենե ծալվող խողովակներով՝ լայնվածքով, և միացնել գործող կոյուղագծին: Կոյուղագծի ընդհանուր երկարությունը կազմվելու է 287 մ: Նախատեսվում է կառուցել 19 հատ դիտահոր:



Անձրևաջրերի հեռացում

Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցը գործում է 1970 թվականից և ունի կոյուղատար (ներառյալ անձրևաջրերի) համակարգ, որը օգտագործվելու է թե շինարարության և թե դպրոցի հետագա շահագործման ընթացքում՝ առաջացող կեղտաջրերի/հոսքաջրերի հեռացման նպատակով:

Ոռոգման համակարգ

Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցը գործում է 1970 թվականից և ունի ջրամատակարարման (այդ թվում ոռոգման) ու ջրահեռացման համակարգեր: Շինարարական աշխատանքներից հետո դպրոցի կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է տարածքում առկա ոռոգման ցանցից, իսկ ջրահեռացումը իրականացվելու է առկա ջրահեռացման համակարգով:

Էլեկտրամատակարարում

Աշխատանքային նախագծում նախատեսված է իրականացնել դպրոցի ներքին էլեկտրամատակարարման ցանց: Ներքին էլեկտրամատակարարման ցանցի սնուցման համար նախատեսվում է կառուցել վահանային սենյակ, որտեղ տեղադրվելու են գլխավոր բաշխիչ վահանը և լուսավորության գլխավոր բաշխիչ վահանը: Վահանային սենյակից իրականացվելու է դպրոցի մասնաշենքերի և կաթսայատան էլեկտրամատակարարումը: Մասնաշենքերում, յուրաքանչյուր հարկում, էլեկտրաուժային մասի հատակագծերի վրա նշված տեղերում, տեղադրվելու են հարկային վահանակներ, որոնցից իրականացվելու է հարկի լուսավորության և վարդակների ցանցերի էլեկտրամատակարարման բաշխումը: Լույսի աղբյուր հանդիսանալու են LED լուսատուները: Սենյակում ընդհանուր լուսավորության համար նախատեսված է լուսատուների տեղական կառավարում: Հարկերի հիմնական անցուղիներում, հասարակական սենյակներում, յուրաքանչյուր դասասենյակում և աշխատասենյակներում նախատեսված է վթարային լուսավորություն CONVERSION KIT LED վթարային լուսավորության բոլորների միջոցով՝ աշխատանքային լուսատուներ ներկառուցված մարտկոցով, որոնք աշխատում են հիմնական էլեկտրասնուցման խմբերով և հոսանքի բացակայության ժամանակ ապահովում են աշակերտների և աշխատակազմի տարահանումը սենյակներից, միջանցքներից և աստիճանավանդակներից: Նախատեսված է նաև էվակուացիոն լուսավորություն, որը իրականացվելու է ելքի դռների վերնամասերում և էվակուացիոն ուղիների վրա տեղադրված էվակուացիոն լույսերի և ելքի ցուցանակների միջոցով, որոնց էլեկտրասնուցումը իրականացվելու է առանձին խմբային գծով: Տվյալ լուսատուները ներկայացված են նույնպես ներկառուցված մարտկոցով, նրանք նորմալ աշխատանքային ռեժիմում (լարման տակ) գտնվում են անջատված վիճակում: Էլեկտրաէներգիայի ընդհատվելու դեպքում վերջիններս ավտոմատ կերպով միանում են իրենց մեջ ներկառուցված տեղային անկախ աղբյուրին՝ ապահովելով 2 ժամյա աշխատանքային ռեժիմ, որը բավարար է տարահանման համար: Վահանակները տեղադրվում են հատակից 1.5 մ բարձրության վրա, ընդհանուր նշանակության վարդակները և անջատիչները, ուսուցիչների աշխատասենյակներում, դասասենյակներում վարդակները տեղադրվում են հատակի նիշից 0.2 մ բարձրության վրա: Դասասենյակներում գրատախտակների վերնամասում տեղակայվելու են վարդակներ, հեռուստաէկրան միացնելու համար: Խոհանոցային հատվածի վարդակները տեղադրվելու են համապատասխան կահույքի: Լուսավորության և խրոցակային վարդակների ցանցը անցկացվելու է հրակայուն պղնձե մալուխով,



խողովակով, սվաղի շերտի տակ: Ուժային ցանցի էլեկտրամատակարարման մոնտաժը իրականացվելու է նույնպես հրակայուն պղնձե մալուխով: Հարկերում էլեկտրաուժային մալուխները անցնում են նախապես կառուցված սակառների վրայով, որոնց մեջ նախագծում նախատեսված մալուխները, իրենց որակական հատկանիշների շնորհիվ, թույլատրվում են իրականացնել փնջերով, առանց խողովակների: Այնուհետև, սակառներից դեպի վահանակներ, մալուխները տեղադրվում են խողովակի մեջ, պատերով, նախապես կառուցված ակոսներում: Ներքին լուսավորության և վարդակների էլեկտրամատակարարման ցանցը իրականացվելու է 3 լարանոց (L, N, PE) ցանցով: էլեկտրաուժային ցանցը իրականացվելու է 5 լարանոց (L1, L2, L3, N, PE) ցանցով:

Աշխատանքային նախագծում նախատեսված վերելակի էլեկտրասնուցումը իրականացվելու է առանձին մալուխային գծով, դեպի ղեկավարման արկղ: Բաշխիչ վահանների մուտքերում տեղադրվելու են մինչև 63Ա հոսանքի դեպքում՝ S203 տիպի (C դասի), իսկ 125Ա և ավել հոսանքի դեպքում՝ Tmax T տիպի եռաֆազ ավտոմատ անջատիչներ: Բաշխիչ վահաններից դեպի վարդակներ ելքային խմբերի վրա տեղադրվելու են դիֆերենցիալ ավտոմատ անջատիչներ (30Ա հոսանքով) AC-C սերիայի և DS201 տիպի, իսկ լուսավորության և մնացած ելքային խմբերի վրա S201 տիպի միաֆազ ավտոմատ անջատիչներ: 2-րդ հարկում գտնվող ֆիզիկայի և քիմիայի դասասենյակներում սեղանների վրա տեղադրված վարդակների սնուցումը իրականացվելու է ուսուցչի սեղանին տեղադրված ղեկավարման վահանից: Ղեկավարման վահանը ներառում է թողարկիչներ: Բոլոր հարկերում տեղադրված սարքավորումները սնվելու են համապատասխան հարկում տեղադրված բաշխիչ վահաններից: էլեկտրահաղորդագծերի մոնտաժը իրագործվելու է սանիտարատեխնիկական ցանցի մոնտաժից հետո, մինչև ծածկի կարերի լցափակումը և միջնորմների հետ միաժամանակ:

Աշխատանքային նախագծով նախատեսված է իրականացնել պոտենցիալների հավասարեցման միջոցառումներ: Գլխավոր բաշխիչ վահանի մեջ տեղադրվելու է գլխավոր հողանցման հաղորդաթիթեղ (ԳՀՀ), որն էլ հողանցվելու է արտաքին կոնտուրով: ԳՀՀ-ին միացվելու են շենք մտնող մետաղական խողովակները, երկաթբետոնե կոնստրուկցիաների մետաղական ամրանները, օդափոխության համակարգի մետաղական օդատարները: Հողանցման կոնտուրն իրականացվելու է հողանցման էլեկտրոդներից և այդ էլեկտրոդներն իրար կապող շերտապողպատից: Միացումներն իրականացվելու են եռակցումով, ընդ որում՝ եռակցման կարի երկարությունը լինելու է 1 կար≥2B, որտեղ՝ B=40 մմ շերտապողպատի լայնությունն է: Կարերի բարձրությունն ընդունվելու է շերտապողպատի հաստությամբ: Հողանցման կոնտուրի դիմողությունը չի գերազանցելու 4 Օհմը՝ տարվա ցանկացած եղանակին:

Հրդեհային ազդանշանային համակարգ

Համակարգի հսկումն ու ղեկավարումն իրականացվելու է C2000M ղեկավարման վահանակի միջոցով: Տարածքները հսկվելու են ջերմային և ծխային ազդասարքերով: Ազդասարքերը, ազդարարները տեղակայվելու են առաստաղների վրա գտնվող լուսավորիչներից և բարձր լարման հոսանքագծերից նվազագույնը՝ 0.5 մ, օդափոխակալորիչներից՝ նվազագույնը 1 մ հեռավորության վրա: Հրդեհի ձեռքի ազդասարքերը տեղակայվելու են հատակից 1.5 մ բարձրության վրա՝ ելքերի և տարհանման ուղիներում: Միջհարկային անցումներում և պատերի վրա բոլոր կապի մալուխները տեղակայվելու են ՊՎՔ խողովակների և մալուխային ուղիների մեջ: Համակարգերի սարքավորումների էլեկտրասնուցման համար օգտագործվելու է անխափան սնուցման աղբյուր:

Ցանցային էլեկտրասնուցման բացակայության դեպքում, անխափան սնուցման աղբյուրներն ապահովելու են համակարգերի երեք ժամյա անխափան աշխատանքը:

Արևային ջերմատաքացման համակարգ

Աշխատանքային նախագծով նախատեսվում է 200 l ծավալային ջերմափոխանակիչով արևային համակարգի տեղադրում թիվ 10 դպրոցի մասնաշենքի տանիքին:

Արևային ջրատաքացուցիչ համակարգը բաղկացած է լինելու՝

1. Տանիքին տեղադրվող HEAT PIPE տեսակի վակուումային կոլեկտորից՝ 24 հատ ջերմային խողովակներով:
2. Ջերմամեկուսացված ծավալային ճնշման բաքից՝ 200 l տարողությամբ և էլեկտրական ջեռուցիչով 1500 Վտ հզորությամբ:
3. Կարգավորիչից (controller)՝ երկու ջերմաստիճանային տվիչներով, որի միջոցով կառավարվելու են շրջանառու պոմպն ու էլեկտրաջեռուցիչը: Ցանցին միացման տեսակը լինելու է միաֆազ:
4. Անվտանգության ստանդարտը՝ IEC կամ համարժեք միջազգային (IEC62109, IEC61727, IEC 62116, IEC61000, IEC 61683, IEC 60068-2):
5. Արևային համակարգի առաջնային կոնտուրը լիցքավորվելու է չառաչող հեղուկով պրոպիլենգլիկոլով:
6. Էլեկտրամատակարարումը շարունակվելու է BBԴԻԳ 3x2.5 մմ<sup>2</sup> մալուխային գծով դեպի դպրոցի առաջին հարկի 0.4 կՎ բաշխիչ վահանակ: Տվիչների մալուխները MKIIIԻԳ 2x0.75մմ<sup>2</sup>: Էլ. մագնիսական փականների սնուցումը իրականացվելու է BBԴԻԳ 2x1.5 մմ<sup>2</sup>, էլեկտրական ջեռուցիչի սնուցումը BBԴԻԳ 2x2.5 մմ<sup>2</sup> բաքի առանձին հողանցումով:
7. Արևային կարգավորիչին կից պլաստմասե տուփում (400x300x160մմ) տեղադրվելու են՝ փոփոխական հոսանքի 3 հատ երկբևեռ ավտոմատ անջատիչներ, որից մեկը SF2 2Px16Ա (Էլ.ջեռուցիչի գծի վրա) և 2 հատը SF1 2Px6Ա (կարգավորիչի գծի վրա): Տեղադրվելու են նաև փոփոխական հոսանքի հավող ներդիրով ապահովիչներ Iw=1Ա (կարգավորիչի գծի վրա) կարճ միացումից գծի պաշտպանության համար:

Արևային համակարգի հողանցումն իրականացվում է կառուցվող հողանցման կոնտուրից՝ բնահողում տեղադրված 10 հատ FeZn էլեկտրոդներից և FeZn շերտապողպատից: Տեղակայված հողանցիչների հողանցման դիմադրությունը լինելու է հավասար կամ պակաս քան 4 Օհմ-ը: Հողանցման սարքվածքի հորիզոնական հատվածի խորությունը հողի տակ լինելու է 0.5 մ-ից ոչ պակաս: Հողանցիչ հաղորդիչը ունենալու է հնարավոր ամենակարճ երկարությունը և նվազագույն թեքումները (թեքման շառավիղը լինելու է 0.3 մ-ից ոչ պակաս):

Արևային կարգավորիչը ապահովելու է առնվազն երկու ջերմային տվիչի ցուցիչների գնահատական, այն հնարավորություն կունենա ծրագրավորվելու ըստ պահանջվող օպտիմալ աշխատանքի և կապահովի շրջանառու պոմպի աշխատանքը, ինչպես նաև հնարավորություն կընձեռի ծրագրով աշխատեցնելու էլեկտրական ջրատաքացուցիչը (առնվազն 1500 Վտ):



Արևային կարգավորիչը ապահովելու է առնվազն երկու ջերմային տվիչի ցուցիչների գնահատական (կոլեկտորի ու բաքի ջրի), հնարավորություն ունենալով ծրագրավորվելու ըստ պահանջվող օպտիմալ աշխատանքի, ապահովելով շրջանառու պոմպի աշխատանքը:

Արևային ֆոտովոլտային համակարգ

Թիվ 10 ավագ դպրոցի երկու մասնաշենքերի (G և F) տանիքների արևային ֆոտովոլտային կայանը իրենից ներկայացնում է 50.4 կՎտ ցանց ներբեռնող հզորության համակարգ, որը կազմված է՝

- (PV)-420 Վտ հզորությամբ, միաբյուրեղ, թվով 120 հատ վահանակներից, որոնց ընդհանուր հզորությունը՝ պիկային հզորությամբ 50.4 կՎտ է,
- Ցանցային կերպափոխիչ - թվով 2 հատ, IP65, եռաֆազ 1 հատ 30 կՎտ և 1 հատ 20 կՎտ, առավելագույն մուտքային լարումը 1000Վ, ԱՀԿՈՒ /MPPT/ մուտքերի քանակը առնվազն 4 հատ, MPPT լարման տիրույթ 160-950Վ,
- Կերպափոխիչի աշխատանքային լարման տիրույթ՝ 160-950Վ, ելքային լարումը՝ 380/400վ, հանախականությունը 50 Հց,
- Ցանցին միացման տեսակը՝ եռաֆազ, նվազագույն եվրոարդյունավետությունը 98.5%, ելքային լարման սինուսը՝ մաքուր սինոսոիդալ:

Կերպափոխիչը ունենալու է համացանցին միանալու և տվյալներ փոխանցելու հնարավորություն, ինչպես նաև, կերպափոխիչում ներկառուցված է լինելու MPPT մուտքին՝ հաստատուն հոսանքի ավտոմատ անջատիչ:

Երկու մասնաշենքերի ենթախմբերն 8 են: Բոլոր հաջորդաբար միացված վահանակների ենթախմբերը համապատասխանաբար միանալու են երկու կերպափոխիչներ 4 մուտքերին՝ զույգ 1x4 մմ<sup>2</sup> (DC) մալուխային գծերով: Երկու կերպափոխիչները միանալու են զուգահեռ, համապատասխան A, B, C ֆազերին, որտեղ յուրաքանչյուրը հնարավորություն ունի անջատվել ընդհանուր ցանցից: Յուրաքանչյուր խմբի կերպափոխիչի հաստատուն հոսանքի մասով պաշտպանված է Էլեկտրամագնիսական խափանումների գոտիներով և ինպուլսային գերլարումների անջատիչներով: Էլեկտրամատակարարումը 20 կՎտ կերպափոխիչի համար շարունակվելու է BBΓԻԳ 5x6 մմ<sup>2</sup> մալուխային գծով դեպի, դպրոցի հասցեյում գտնվող ՏԵԿ 0.4 կՎ բաշխիչ արկղ: Էլեկտրամատակարարումը 30 կՎտ կերպափոխիչի համար շարունակվում է BBΓԻԳ 5x10 մմ<sup>2</sup> մալուխային գծով դեպի, դպրոցի հասցեյում գտնվող ՏԵԿ 0.4 կՎ բաշխիչ արկղ:

Նախատեսվող գործունեության իրականացման համար կիրառվող շինարարական կոնստրուկցիաների և նյութերի անվանացանկը, ինչպես նաև դրանց քանակությունները բերված են **Հավելված 7-ում**:

Դպրոցի կառուցման աշխատանքներում շին.տեխնիկաներից օգտագործվելու են՝ էլեկտրական հետահար մուրճ, էքսկավատոր, ինքնաթափ մեքենաներ, բետոնախառնիչ մեքենա, ավտոկռունկ և բուլդոզեր:

Կապալառու կազմակերպությունը նախատեսվող գործունեության տարածքի հարևանությամբ վարձվելու է սեփական տուն, որը հանդիսանալու է կառուցման աշխատանքների

Ժամանակահատվածում կազմակերպության գրասենյակը, ինչպես նաև ծառայելու է կառուցման աշխատանքներում ներգրավված անձանց սանիտարահիգիենիկ կարիքները (լոգարան, զուգարան, սննդի ընդունման և հանգստի սենյակներ) հոգալու համար: Բոլոր աշխատողների համար նախատեսված է լինելու ընդմիջում, որի ընթացքում նրանք ապահովվելու են ճաշով և անհրաժեշտ հանգստաժամանակով:

### **6.3 Հողային աշխատանքներ**

Դպրոցի վերակառուցման աշխատանքների արդյունքում իրականացվելու են հողային աշխատանքներ: Ընդհանուր առմամբ փորվելու է 4305.7 մ<sup>3</sup> ծավալով հող, որից 4204.8 մ<sup>3</sup> ծավալով հողը օգտագործվելու է հետլցման աշխատանքների իրականացման համար, իսկ 100.9 մ<sup>3</sup> ծավալով հողը տեղափոխվելու է քաղաքային աղբավայր: Հետլցման համար օգտագործվող հողից (4204.8 մ<sup>3</sup>) 1674 մ<sup>3</sup> ծավալով հողը բուսահող է, որը օգտագործվելու է տեղում՝ բարձրակարգ ծառերի տնկման, ծառերի արմատների ամրացման, տարածքի բարեկարգման աշխատանքների համար:

Բուսահողը պահվելու է առանձին հողաթմբերով: Ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու նպատակով հողաթմբերը ծածկվելու են անջրաթափանց բրեզենտե ծածկույթով:

Բուսահողի հանումը, պահումը և հետագա օգտագործումը իրականացվելու է ապահովելով ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի "Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ.-ի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին" թիվ 1404-Ն, ինչպես նաև ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի "Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին" թիվ 1396-Ն որոշումների պահանջները:

Դպրոցի նոր կառուցվող շենքի տարածքի կանաչապատման համար նախատեսվում է հատել, տեղափոխել, տնկել նոր ծառեր և տեղադրել սիգամարգեր: Գոյություն ունեցող դպրոցի շենքի քանդման և շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ տարածքում առկա ծառերը խոչընդոտ են հանդիսանում տեխնիկայի տեղաշարժման համար, իսկ դրանցից որոշները գտնվում են նոր կառուցվող շենքի տարածքում: Գոյություն ունեցող ծառերից 68-ը ենթակա են հատման, որոնցից մի մասը անկենսունակ են, մյուս մասը անհնար է տեղափոխել՝ մեծ չափեր ունենալու պատճառով, իսկ 17-ը ենթակա են վերատնկման: Նախատեսվում է հատվող ծառերի փոխարեն և կանաչ գոտիներում տնկել նոր ծառեր՝ հացենիներ, և արևելյան թույաներ: Նշված ծառերը միայնացից ունենալու են 3-ից 4.5 մ հեռավորություն:

### **6.4 Աշխատանքների իրականացման ժամանակացույցը**

Թիվ 10 ավագ դպրոցի ապամոնտաժման և կառուցման աշխատանքների ընդհանուր տևողությունը 24 ամիս է, որից՝

- Նախապատրաստական աշխատանքների տևողությունը - 1 ամիս,
- Ապամոնտաժման աշխատանքների տևողությունը - 5 ամիս,

- Կառուցման աշխատանքների տևողությունը - 18 ամիս:

Ապամոնտաժման և կառուցման աշխատանքները նախատեսվում է իրականացնել 4 փուլերով (չհաշված նախապատրաստական աշխատանքների 1 ամիսը)

- 1-ին փուլ - նախատեսվում է քանդել-ապամոնտաժել դպրոցի գոյություն ունեցող շենքի 1, 2 և 3 մասնաշենքերը՝ ապամոնտաժման տևողությունը 2.5 ամիս,
- 2-րդ փուլ - նախատեսվում է կառուցել դպրոցի նոր A, B, E և F մասնաշենքերը՝ կառուցման տևողությունը 9 ամիս,
- 3-րդ փուլ - նախատեսվում է ապամոնտաժել դպրոցի գոյություն ունեցող շենքի 4-րդ մասնաշենքը՝ ապամոնտաժման տևողությունը 2.5 ամիս,
- 4-րդ փուլ - նախատեսվում է կառուցել դպրոցի նոր G, C, D մասնաշենքերը՝ կառուցման տևողությունը 9 ամիս:

### **6.5 Թափոնների առաջացումը**

Դպրոցի ապամոնտաժման և կառուցման աշխատանքների ընթացքում կառաջանան հետևյալ տեսակի և ծավալի թափոններ՝

- Շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ (ծածկագիր 91200601 01 00 4) - մինչև 4208 տ,
- Չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ (այդ թվում թուջի և/կամ պողպատի փոշի), (ծածկագիր 35131100 01 00 4) - մինչև 0.1 տ,
- Օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար (ծածկագիր 35310305 01 01 3) - մինչև 0.05 տ,
- Չտեսակավորված այլումին պարունակող թափոններ (այդ թվում այլումինի փոշի), (ծածկագիր 35310111 01 00 4) - մինչև 0.03 տ,
- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի), (ծածկագիր 91200400 01 00 4) - 0.3 տ:

Որպես երկրորդային հումք օգտագործվող թափոնները, մասնավորապես՝ սև և գունավոր մետաղների ջարդոնը, կփոխանցվեն համապատասխան լիցենզավորված կազմակերպությունների, իսկ շինարարական և կենցաղային աղբը կփոխադրվի Վաղարշապատի համայնքային աղբավայր:

Դպրոցի շահագործման փուլում առաջացող կենցաղային աղբը պարբերաբար հեռացվելու է տարածքից՝ Վաղարշապատի համայնքի աղբահանող կազմակերպության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

### **6.6 Վտանգավոր նյութերի և հողային զանգվածի պահումը**

Շինարարության ընթացքում օգտագործվող շինանյութը մինչ օգտագործումը պահվելու է ծածկված բրեզենտով կամ ՊՎԶ թաղանթով: Բետոնե խառնուրդը պատրաստի վիճակում ստացվելու է մոտակա բետոնահանգույցից, ինչը կնվազեցնի շինարարության ընթացքում փոշու առաջացումը:

Շինարարական տեխնիկայի լիցքավորումը իրականացվելու է մոտակա բենզա-, դիվառելիքա- ցակայանից (գտնվում է նախատեսվող գործունեության վայրից մոտ 750 մ հեռավորության վրա), իսկ տեխնիկական սպասարկումը կատարվում է մասնագիտացված կենտրոններում: Այսինքն, բուն գործունեության վայրում յուրի, վառելիքի կամ այլ վտանգավոր հեղուկների պահման տեղամասեր չեն նախատեսվում: Հողային հանույթը, այդ թվում հողի բերրի շերտը՝ մինչ տարածքի բարեկարգման նպատակով օգագործումը, պահվելու է նախատեսվող գործունեության տարածքում՝ ծածկված բրեզենտե կամ ՊՎՔ թաղանթով:

## **7. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Աշխատանքային նախագծով նախատեսվում է ապամոնտաժել և վերակառուցել Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցը: Դպրոցը կառուցվել է 1970 թվականին և մինչ այսօր չի վերանորոգվել: ՀՀ կառավարության որոշման համաձայն՝ դպրոցի սեյսմիկ վիճակից ելնելով, նպատակահարմար չի գտնվել այն պահպանել, քանի որ դպրոցի շինությունների կոնստրուկտիվ համակարգը գնահատվել է անբավարար: Ուստի անհրաժեշտություն է առաջացել ապամոնտաժել և վերակառուցել դպրոցը՝ ունենալով բոլոր չափանիշներին համապատասխանող, նոր տեխնոլոգիաներով համարված դպրոց: Ստորև **Նկար 3**-ում ներկայացված է Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցի ներկայիս վիճակը:

**Նկար 3. Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցի ներկայիս տեսքը և վիճակը**



*Պահեստային մուտք*



*Գլխավոր մուտքի*





*Միջանցք*



*Ուսուցչանոց*



*Դասարաններ*



*Սպորտային դահլիճ*



*Հանդիսությունների դահլիճ*

Դպրոցի տարածքում կան անկենսունակ, չորացած և թեքված ծառեր, որոնք վտանգ են ներկայացնում երեխաների համար: Դպրոցի ուսուցիչները մտահոգվում են մասնավորապես փոքր տարիքի երեխաների համար, ովքեր հաճախ են ընդմիջման ժամերին դրսում զբոսնելիս մազլցում ծառերի վրա, որի արդյունքում հնարավոր է լինեն դժբաղտ պատահարներ: Ուստի աշխատանքային նախագծով նախատեսվում է հատել այդ ծառերը, փոխարենը տնկել բարձրակարգ նոր ծառեր՝

հացենիներ և արևելյան թույաներ: Աշխատանքային նախագծով նախատեսվում է նաև դպրոցի համար կառուցել սպորտային և խաղային հրապարակներ, ինչը դրականորեն կազդի դպրոցի աշակերտների սպորտային կյանքի աշխուժացման, ինչպես նաև սպորտի նկատմամբ հետաքրքրություն ձևավորելու հարցում:

## **8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

### **8.1 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և ռելիեֆը**

Նախատեսվող գործունեության վայրը՝ Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցը, գտնվում է Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքում, որն աշխարհագրորեն տեղակայված է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում: Գեոմորֆոլոգիական տեսակետից դաշտավայրի այդ մասը իրենից ներկայացնում է նախալեռնա-թեքվածքային, թույլ ալիքաձև հարթավայր: Տարածաշրջանի ռելիեֆը հարթ է, ունի հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք բավական հավասարաչափ թեքվածություն: Հյուսիսում՝ նախատեսվող գործունեության վայրից դեպի հյուս-արևելք, տարածքը իրենից ներկայացնում է հրաբխային սարահարթ, հատված ձորակներով, ոչ խորը կիրճերով, որոնք հանդիսանում են մթնոլորտային տեղումների կոլլեկտորներ: Ծայրամասային՝ արևելյան և հյուսիս-արևմտյան մասերում տարածքը ընդունում է բլրակային բնույթ:

Լանդշաֆտային տարբերությունների և շրջանների ձևավորման մեխանիզմների համեմատությունը ցույց է տալիս, որ լանդշաֆտի կառուցվածքում անտրոպոգեն և բնական բաղադրիչները գրավում են առաջնային կամ երկրորդական դիրք: Լանդշաֆտային գոտին կիսաանապատային գոտին է, անապատային տեղամասերով: Տիպիկ անապատային լանդշաֆտներ Հայաստանի տարածքում չկան, սակայն դրանց նմանակները, առանձին հատվածներով հանդիպում են տվյալ տարածաշրջանում, հիմնականում գետային նստվածքների ու երրորդական կավերի վրա ծովի մակերևույթից մինչև 900 մ բարձրության վրա և գրավում են փոքր տարածքներ: Արարատյան հարթավայրին առավել բնորոշ են կիսաանապատային և ադուտա - մարգագետնային լանդշաֆտները: Վերջիններս մտնում են բուն կիսաանապատային գոտու մեջ: Այնտեղ, ուր գրունտային ջրերը մոտ են մակերևույթին, առաջացել են գերխոնավ, այսպես կոչված չալաների հողեր: Այս գոտում առանձնակի տեղ են զբաղեցնում նաև ցածրավայրային ճահճային լանդշաֆտները, որոնք հիմնականում ենթարկված են մելիորացիայի ու կուլտուրականացման: Որոշ վայրերում հանդիպում են թաքիրանման հողեր և ավազի բլրակներ: Հարավ - արևելքից եզրավորող նախալեռնային և ցածր լեռնային նստվածքային ջրամերժ ապարներ ունեցող տարածքներում՝ շնորհիվ չոր կլիմայի, առաջացել են անապատա - կիսաանապատային լանդշաֆտների հետաքրքիր տիպ՝ Բեդլենդներ, որոնք զբրծ են բուսական ծածկույթից: Կիսաանապատային լանդշաֆտը հատուկ է միջին Արաքսի հովտին: Կիսաանապատի ռելիեֆը ալիքավոր է, թույլ մասնատված, հարթավայրի եզրերում և մանավանդ արևմտյան մասում՝ քարքարոտ: Տարածաշրջանում հանդիպող յուրաքանչյուր լանդշաֆտային գոտի առանձնանում է իր ուրույն էկոհամակարգերով և դրանցում ներկայացված բուսական և կենդանական աշխարհով:

## 8.2 Տարածաշրջանի երկրաբանությունը և հիդրոերկրաբանությունը

Տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցենային և պլեյստոցենային բազալտները, տուֆերը և տուֆաբրեկչիաները, որոնք տեղադրված են երրորդական հասակի նստվածքային հաստաշերտերի վրա և ծածկված են ավելի երիտասարդ ալյուվիալ-պրոյուվիալ-դելյուվիալային նստվածքներով: Ալյուվիալ-պրոյուվիալ նստվածքների հաստաշերտում առանձնանում են հիմնականում հետևյալ տարատեսակները՝ կավավազներ, ավազակավեր, ավազներ, կոպճա-մանրախնային նստվածքներ: Վերը նշված բոլոր տարատեսակները բնութագրվում են բարդ միահյուսվածքներով, շերտադարձամբ, կամ էլ աստիճանաբար անցումով մի ֆացիալ տարատեսակից՝ մյուսին: Նրանք չունեն տարածական տեղադրման հաստատունություն և շերտերի հերթականության օրինաչափություն:

Հանդիպում են փոշենման, խտացված և սպիտակահողերի տիպի կավավազներ: Դրանք քիչ թե շատ պարունակում են մանրախիճ, կոպիճ և տարահատիկ ավազ: Սպիտակահողային կավավազները սուֆոզիոն անկայուն են: Խտության տեսակետից կավավազները փոփոխական են: Հանդիպում են պնդացած ենթաշերտեր, իսկ որոշ շերտեր գտնվում են փխրուն հոսուն վիճակում:

Ավազակավերի մեջ՝ կախված հատիկաչափական կազմից, առանձնանում են ծանր, միջին և թեթև տարատեսակները: Բոլոր տարատեսակները հաճախ պարունակում են մանրախճի և կոպիճի միացություններ: Հաճախ հանդիպում են փոշենման ավազակավեր, որոնք անցնում են կավավազների, պարունակում են ավազների ենթաշերտեր և ոսպնյակներ: Ծանր ավազների շարքում հանդիպում են թեթև մոխրանման ավազներ: Որոշ ենթաշերտեր ներկայացված են մաքուր, լավ որակի ավազներով, իսկ որոշները վատ որակի են, ունեն փոշենման տարրերի խառնուրդներ կամ էլ մանրախճի և կոպիճի միացություններ, որոնց պարունակությունը տատանվում է մեծ սահմաններում: Մանրախճա-կոպիճային նստվածքները խիստ տարբերվում են տարակազմությամբ: Խոշորահատիկ ֆրակցիան ներկայացված է տարբեր մեծության մանրախճով, մանր և միջին կոպիճով: Հանդիպում է նաև խոշոր կոպիճ: Բեկորները կազմված են բազալտներից, տուֆերից, հազվադեպ խարամներից: Նրանք հիմնականում լավ հղկված են և ունեն կլոր ձև: Մանրախճա-կոպճային գոյացությունները պատկանում են խոշորաբեկորային գրունտներին:

Տարածաշրջանում արմատական ապարներից տարածված են բազալտները և տուֆերը: Բազալտները բնութագրվում են ինտենսիվ ճաքճքվածությամբ և հողմնահարմամբ: Տուֆերը և տուֆավազները քիչ խախտված են: Լավաների որոշ մասը մեծաբեկորային է:

Տարածաշրջանը հիդրոերկրաբանական տեսակետից գտնվում է Արարատյան արևելյան ջրավազանում: Ստորերկրյա ջրերը պատկանում են լճա-գետային գոյացություններին և ճաքճքված անդեզիտա-բազալտներին: Ստորերկրյա ջրերի սնուցումը իրականանում է հիմնականում Արագած սարի հարավային լանջերից հոսող գետերի ենթահունային ջրերի հաշվին, ինչպես նաև միջավային ջրերի հոսքի միջոցով: Ճնշումնային հորիզոնը տեղադրված է 150-200մ հասնող հավասար խորություններում, ունի բացասական ճնշում (հոսք): Զաղաքի և շրջանի տարածքում հանդիպում են նաև գրունտային ջրեր: Նրանք պատկանում են ալյուվիալ-դելյուվիալ, պրոյուվիալ նստվածքներին և սնվում են մակերևույթային հոսքի, մթնոլորտային տեղումների, ենթահունային ջրերի և արտեզյան հորատանցքերի արտանետման ջրերից: Գրունտային ջրերը առավելագույն մակարդակի հասնում են ապրիլ-մայիս ամիսներին, իսկ նվազագույնի՝ օգոստոս- նոյեմբեր ամիսներին:

Տարածաշրջանի գլխավոր ջրային երակը հանդիսանում է Սելավ-Մաստարա գետը, որն ունի սեզոնային բնույթ և բացառապես սնվում է հալոցքային և անձրևային ջրերով: Գետը գործում է միայն ինտենսիվ ձնհալերի և վարար տեղումների ժամանակ: Այն սկիզբ է առնում Արագած լեռան հարավ-արևմտյան լանջից, դուրս է գալիս Արարատյան հարթավայր և թափվում է Սև-Ջուր գետը Սելավ-Մաստարա գետն են թափվում բազմաթիվ՝ Բազմաբերդի, Թալիշ-Շամիրամի և այլ վտակներ: Նրանք նույնպես ցուցաբերում են խիստ սեզոնային բնույթ:


### 8.3 Սեյսմատեկտոնիկ պայմանները

Նախատեսվող գործունեության վայրի սեյսմիկ և սելավային ռիսկերի քարտեզը ներկայացված է ստորև **Նկար 4**-ում: ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզի համաձայն՝ նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է 1-ին կարգի հավանական սեյսմիկ վտանգի գոտում, իսկ ՀՀ սելավավտանգ գոտիների քարտեզի համաձայն՝ նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է ոչ վտանգավոր սելավային գոտում:

**Նկար 4. Նախատեսվող գործունեության վայրի սեյսմիկ և սելավային ռիսկերը<sup>2</sup>**

**Ա. ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզ<sup>3</sup>**

**Բ. ՀՀ սելավավտանգ գոտիների քարտեզ<sup>4</sup>**



### 8.4 Տարածաշրջանի հողերի նկարագիրը

Տարածաշրջանի հողային ծածկույթն իրենից ներկայացնում է ՀՀ տարածքի տարբեր մասերում հանդիպող տարաբնույթ հողածածկեր: Տարածաշրջանի ցածրադիր մասում տարածված են

<sup>2</sup>Հայաստանի ջրային ռեսուրսների ատլաս, Երևան-2008


<sup>3</sup>ՀՀՇՆ 20.04 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմեր

<sup>4</sup>«Աղետների ռիսկերի կառավարումը տեղական մակարդակում» ձեռնարկ, ՄԱՁԾ-ի և ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա, 2011

կիսաանապատային հողերը, որոնք տարածաշրջանում կազմում են աննշան տոկոս: Նախալեռնային շրջաններում լայնորեն տարածված են խայտաբղետ, կավաբեր, տեղ-տեղ աղակալված հողերը: Տարածաշրջանը ծածկված է ջրաբերուկային-մարգագետնային՝ հնում ոռոգվող հողերով, անտառային բուսականությունը՝ բնահողային ծածկույթին համապատասխան, նույնպես ենթարկված է ուղղահայաց գոտևորման: Առավել ցածրադիր տեղերում, Արաքսի և նրա վտակների փուխր բերվածքներում ձևավորվել են հումուսով աղքատ գորշ հողեր՝ բաց գորշագույն հողեր ու տիպիկ գորշահողեր՝ աղակալված տարածքներով: Անապատի համար բնորոշ այս հողերի առաջացմանը նպաստել են կլիմայի չորությունը և բուսական ծածկույթի աղքատությունը: Բնորոշ են բաց գորշագույն և գորշագույն հողերը, որոնք հիմնականում կուլտուրականացված են և ոռոգվում են գյուղատնտեսական նպատակով: Այս գոտու լանդշաֆտների մեծ մասը վերափոխվել են ջերմասեր կուլտուրաների ագրոլանդշաֆտների: Վերջին տասնամյակներին իրականացվել են աղուտային հողերի աղազրկման և կուլտուրականացման աշխատանքներ:

Բուն նախատեսվող գործունեության տարածքը գնտվում է անցյալում ջրայնացած և ոռոգված մշակովի գորշ լեռնային հողերի տարածքում, ինչը ներկայացված է ստորև **Նկար 5**-ում:

**Նկար 5. Նախատեսվող գործունեության վայրի հողային ծածկույթը**



### 8.5 Կլիման և օդերևութաբանական պայմանները

Տարածաշրջանը գտնվում է Արարատյան հարթավայրում: Վերջինս հանդիսանում է հանրապետության ամենամեծ կլիմայական գոտին: Այն իրենից ներկայացնում է Հայկական Լեռնաշխարհի առավել ցածր և պարփակված մասերից մեկը: Կլիմայական գոտուն բնորոշ առանձնահատկությունը խիստ մայրցամաքային լինելն է, ջերմաստիճանի և օդի խոնավության տարեկան և օրեկան մեծ տատանումներով:

### 8.5.1 Ձերմաստիճանը

Տարածաշրջանում օդի բացարձակ նվազագույնը աստիճանը  $-31^{\circ}\text{C}$  է: Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է  $41^{\circ}\text{C}$ , ամենատաք ամսվա միջին առավելագույնը՝  $25.7^{\circ}\text{C}$ : Ըստ ՀՀՇՆ II-7.01-2011 "Շինարարական կլիմայաբանություն" շինարարական նորմերի, Արմավիրի տարածաշրջանում օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանները բերված են ստորև **Աղյուսակ 1**-ում:

**Աղյուսակ 1. Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը,  $^{\circ}\text{C}$**

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, $^{\circ}\text{C}$											Միջին տարեկան, $^{\circ}\text{C}$	Բացարձակ նվազագույն, $^{\circ}\text{C}$	Բացարձակ առավելագույն, $^{\circ}\text{C}$	
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր				Դեկտեմբեր
Արմավիր	870	-4.2	-1.6	4.9	12.4	17.4	21.6	25.7	25.1	20	12.9	5.7	-0.9	11.6	-31	41

### 8.5.2 Խոնավությունը

Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 62%: Ամենացուրտ ամսվա օդի միջին հարաբերական խոնավությունը կազմում է 62%, իսկ ամենաշոգ ամսվանը՝ 29%:

**Աղյուսակ 2. Օդի հարաբերական խոնավության տվյալները**

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների											Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր		Դեկտեմբեր	ամենացուրտ ամսվա, %	ամենաշոգ ամսվա, %
Արմավիր	76	72	62	56	57	51	48	49	53	65	74	78	62	62	29

### 8.5.3 Մթնոլորտային տեղումները

Միջին տարեկան տեղումների քանակը կազմում է 260 մմ: Առավելագույնը դիտվում է մայիս ամսին՝ 44 մմ, նվազագույնը օգոստոս-սեպտեմբեր ամիսներին՝ 9-11 մմ: Ըստ ՀՀՇՆ II-7.01-2011 "Շինարարական կլիմայաբանություն" շինարարական նորմերի, Արմավիրի տարածաշրջանում մթնոլորտային տեղումների վերաբերյալ տվյալները բերված են ստորև **Աղյուսակ 3**-ում:

**Աղյուսակ 3. Մթնոլորտային տեղումները, %**


Բնակավայրի, օբյեկտի/արհեստական կայանի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական օրական առավելագույն , մմ												Զնամածկույթ			
	ըստ ամիսների												Առավելագույն տանձօրյա/կայանի արժեքը, սմ	Տարածված միջին օրերի ձյան ընդհանուր քանակը, մմ	Զյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				Տարեկան
Արմավիր	18	19	25	32	44	26	12	9	11	25	23	16	260	42	38	92
	19	21	26	37	42	21	38	31	35	30	30	20	42			

**8.5.4 Քամի**


Դիտարկվող տարածքում քամու միջին արագությունների բաշխվածությունը տարվա տարբեր ժամանակաշրջաններում բերված է ստորև **Նկար 6**-ում:

Քամու միջին արագության ամենամեծ արժեքները գրանցված են ապրիլ և հոկտեմբեր ամիսներին: Ապրիլ ամսին՝ հարավ-արևմտյան և հյուսիս-արևմտյան (3.7 մ/վ), իսկ հոկտեմբեր ամսին՝ հարավ արևմտյան ուղղություններով (3.8 մ/վ): Տարվա տարբեր ժամանակաշրջաններում քամու միջին ամսական արագության ամենամեծ արժեքը ստացվում է ապրիլ ամսին և կազմում է 1.3 մ/վ, իսկ միջին տարեկան արագությունը հավասար է 0.9 մ/վ: Ուժեղ քամիներով օրերի քանակը ( $\geq 15$  մ/վ) 12-ն է: Քամու ուղղությունների կրկնելիության պատկերները բերված են ստորև **Նկար 7**-ում: Ամենամեծ կրկնելիությունը դիտվում է հուլիս ամսին արևելյան ուղղությամբ և կազմում է 31%:

**Նկար 6. Քամու միջին արագությունների բաշխվածությունը**



**Նկար 7. Քանու ուղղությունների կրկնելիությունը**



### 8.6 Տարածաշրջանի հատուկ պահպանվող տարածքները

Նախատեսվող գործունեության տարածաշրջանին ամենամոտ գտնվող հատուկ պահպանվող տարածքը դա "Որդան կարմիր" պետական արգելավայրն է:

#### **"Որդան կարմիր" պետական արգելավայր**

"Որդան կարմիր" պետական արգելավայրը (այսուհետ՝ արգելավայր) ստեղծվել է Հայկական Մովսեսական Սոցիալիստական Հանրապետության Մինիստրների խորհրդի 1987 թվականի փետրվարի 2-ի թիվ 61 որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի աղուտ հողերի վրա: Արգելավայրն զբաղեցնում է 219.85 հեկտար տարածք, բաղկացած է երկու առանձին տեղամասերից՝ Արագափի գյուղական համայնքի հյուսիսարևմտյան մասում (198.33 հեկտար) և Ջրառատի գյուղական համայնքի հյուսիսային մասում (21.52 հեկտար)՝ Արարատյան հարթավայրում, ծովի մակերևույթից 835-850 մետր բարձրության վրա: Արգելավայրի կազմակերպման հիմնական նպատակն Արարատյան հարթավայրի աղուտային (հալոֆիտ) ցուցանմուշային էկոհամակարգերի, դրանց բուսական ու կենդանական աշխարհի ամբողջության պահպանության ու կայուն օգտագործման ապահովումն է: Արգելավայրի հատուկ պահպանության



օբյեկտ են հանդիսանում Հայաստանի Հանրապետության համար էնդեմիկ արժեքավոր միջատ որդան կարմիրը և նրա սնման օբյեկտ հանդիսացող բույսերից որդանախտը:

Նախատեսվող գործունեության վայրը Արագածի գյուղական համայնքում գտնվող "Որդան կարմիր" պետական արգելավայրից գտնվում է 20 կմ հեռավորության վրա, իսկ Ջրառատ գյուղական համայնքի "Որդան կարմիր" պետական արգելավայրից՝ 10 կմ հեռավորության վրա, ինչը ներկայացված է ստորև **Նկար 8-ում**

**Նկար 8. Նախատեսվող գործունեության վայրի և "Որդան կարմիր" պետական արգելավայրի միջև ընկած հեռավորությունը**



### 8.7 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի բուսական աշխարհը

Բուսական աշխարհը ներկայացված է ավազա-կավային մայր ապարների վրա բաց և մուգ դարչնային հողերի վրա զարգացած չոր տափաստանային լանդշաֆտային գոտուն բնորոշ բուսականության տեսակներով: Տարածաշրջանում գրանցված են մոտ 130 բուսատեսակ, որոնցից որպես դոմինանտ կարելի է նշել հովվափողազգիներից (*Alismataceae*)՝ հովվափող լանցետային (*Alisma lanceolatum*), սովորական նետախտը (*Sagittaria sagittifolia* L.), եռատերև նետախտը (*Sagittaria trifolia* L.), հովանոցազգիներից՝ սկտոնոլեմ խոշորաբաժակը (*Actinolema macrolema*), աննշմարակող անհարթապտուղը (*Aphanopleura trachisperma*), երնջակ Վանատուրի (*Eringium vanaturii*), աստղաձաղիկազգիներից՝ վարդատերեփուկ մուշկայինը (*Amberboa moschata*), խոզանափուշ բարակը (*Caucinia tenella*), կանգար տուրնեֆորի (*Gundelia tournefortii*), կաթնուկ Թախտաջյանի (*Lactuca takhtadzhianii*), խաչածաղկավորներից՝ լըջուն թռչնակտուց (*Isatis ornitorhynchus*), ցախակեռասազգիներից՝ կտտենի, թանթրվենի Տիգրանի (*Sambucus tigranii*), մեխակազգիներից՝ փշատերևուկ ծակող (*Acanthophyllum pungens*), ալոխրուլա բունգեի (*Allochrusa bungei*), մեխակ Լիբանանի (*Dianthus libanotis*), թելուկազգիներից՝ բիեներգիա շուրջաթև (*Bienertia*

cycloptera), օշան Թամամշյանի (*Salsola tamamschjanae*), սպանախ քառաեգ (*Spinacia tetrandra*), լոբազգիներից՝ գազ տարորինակ (*Astragalus paradoxus*), հացհամեն գլխիկավոր (*Trigonella capitata*), ֆրանկենազգիներից՝ ֆրանկենիա փոշապատ (*Frankenia pulverulenta*), բորակաթուփազգիներից՝ բորակաթուփ շոբերի (*Nitraria schoberi*), հացազգիներից՝ այծակն հաստ (*Aegilops crassa*), ցորեն արարատյան (*Tritium araraicum*), կարմրանազգիներից՝ կարմրան (*Tamarix*), կարմրան ութառեզանի (*Tamarix octandra*), զուգատերևազգիներից՝ տետրադիկլիս բարաիկ (*Tetradiclis tanella*) և այլն:

Ստորև Աղյուսակ 4-ում ներկայացված են տարածաշրջանում հանդիպող և ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները: Աղյուսակում բերված է նաև ԲԳՄՄ-ի Կարմիր ցուցակում բուսատեսակների ունեցած կատեգորիան:

**Աղյուսակ 4. Տարածաշրջանում հանդիպող և Կարմիր Գրքում գրանցված բուսատեսակները**

Հ/Հ	Բուսատեսակների անվանումը		ԲԳՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան <sup>5</sup>
	Լատիներեն	Հայերեն	
1	<i>Acorus calamus L.</i>	Իսնկեղեգ ճահնային	EN
2	<i>Silene arenosa K.Koch</i>	Ծվծվուկ ավագուտային	CR
3	<i>Salsola tamamschjanae Iljin</i>	Օշան Թամամշյանի	EN
4	<i>Astragalus paradoxus Bunge</i>	Գազ տարորինակ	EN
5	<i>Halanthium kulpianum (K. Koch) Bunge.</i>	Աղածաղիկ կուլպական	EN

Տարածաշրջանում հանդիպող և Կարմիր Գրքում գրանցված բուսատեսակների լուսանկարները ներկայացված են ստորև Նկար 9-ում:

**Նկար 9. Տարածաշրջանում հանդիպող և Կարմիր Գրքում գրանցված բուսատեսակների լուսանկարները**



*Acorus calamus L.* - Իսնկեղեգ ճահնային




*Silene arenosa K.Koch* - Ծվծվուկ ավագուտային

<sup>5</sup> EN (*Endangered*) - վտանգված տեսակ,  
CR (*Critically Endangered*) - կրիտիկական վիճակում գտնվող տեսակ,



*Salsola tamamschjanae* Iljin - Օշան Թամսաշյանի



*Astragalus paradoxus* Bunge - Գազ տարրինակ

## 8.8 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի կենդանական աշխարհը

Տարածաշրջանում դիտարկվում են միայն ողնաշարավոր կենդանիները: Տարածված են ցածր բարձրության (մինչև 1000 մ ծովի մակերևույթից բարձր) հարթավայրերին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Մակայն այստեղ հանդիպում են նաև արտազոնալ բնակավայրերին (քարաթափեր, ցանքեր, այգիներ, բնակավայրեր) բնորոշ տեսակներ: Տարածաշրջանում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ (որոնցից 82-ը՝ հանդիպում են նաև արտազոնալ բնակատեղերում), որոնցից 28 տեսակը կաթնասուն է, 67 տեսակը թռչուն, 15 տեսակը սողուն և 3 տեսակը երկկենցաղ: Կաթնասուններից առավել հաճախ հանդիպում են կրծողների դասին պատկանող կենդանիները, որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ: Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով: Սողունները և երկկենցաղները փոքրաքանակ են: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ:

Տարածաշրջանում դոմինանտ և բնորոշ տեսակներից կարելի է նշել Հայաստանում ամենուրեք տարածված *Crocidura* (սպիտակատամիկ), *Vulpes vulpes* L. (աղվես ս), *Cricetus auratus* Nat. (զերմանամուկ), *Mus mus* L. (դաշտամուկ), *Perdix perdix* L. (կաքավ), *Grus grus* L. (կռունկ) և այլն: Տարածաշրջանին բնորոշ ողնաշարավոր կենդանիներից բնորոշ են՝ եղեգնակատուն, կռնչան բաղը, ճահճակուղը, լճագորտը, ժայռային մողեսը, սովորական յորտուն, տնային ճնճողկը, մոխրագույն ագռավը, կաչաղակը, մոխրագույն առնետը, գայլը, աքիսը: Անողնաշարավոր կենդանիներից՝ ծովախեցգետինը, մրջյունը, մեղուն, ճիկը, մորեխը, կաղամբաթիթեռը, ճանճերը, մոծակները: Տարածաշրջանին բնորոշ էնդեմիկ կենդանիներից է՝ հայկական որորը (*Larus armeniacus* But.): Հազվադեպ հանդիպում է նաև Արարատյան որդան կարմիր (*Porphyrophora hammielii* Brandt): Տարածաշրջանում կենդանիները հանդիպում են նաև որսի կենդանիներ՝ մշկամուկ, շնագայլ, խեցգետին (վայրի): Մարդու գործունեության հետ կապված բազմաթիվ պատճառներով (բուսականության վերացում, ոռոգում, ավտոճանապարհների, օգտակար հանածոների արդյունահանում և վերամշակում, որսագողություն և այլն) կենդանիների թիվը կրճատվել է և շարունակում է կրճատվել: Կենդանական աշխարհի պահպանության նպատակով դրանց զգալի մասը վերցված է հատուկ պահպանության տակ և գրանցված է Հայաստանի Հանրապետության Կարմիր Գրքում: Ստորև Աղյուսակ 5-ում ներկայացված են տարածաշրջանում հանդիպող և ՀՀ Կարմիր գրքում գրանցված

կենդանատեսակները: Աղյուսակ 5-ում բերված է նաև ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում կենդանատեսակների ունեցած կատեգորիան:

**Աղյուսակ 5. Տարածաշրջանում հանդիպող և Կարմիր Գրքում գրանցված կենդանատեսակները**

Հ/Հ	Կենդանատեսակների անվանումը		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան <sup>6</sup>
	Լատիներեն	Հայերեն	
1	Erinaceus (Hemiechinus) auritus Gmelin	Լայնականջ ոզնի	EN
2	Allactaga elater Lichtenstein	Փոքր ճագարամուկ	EN
3	Rhinolophus Mehelyi	Մեհելիի պայտաքիթ	VU
4	Phrynocephalus horvathi	Անդրկովկասյան տակիրային կլորագլուխ	CR
5	Miniopterus schreibersi Kuhl.	Սովորական երկարաթև չղջիկ	VU
6	Vormela peregusna	Իսայտաքիս	VU
7	Charadrius alexandrinus Linnaeus	Ծովային քարադր	VU
8	Glareola pratincola	Մարգագետնային ծիծառակտցար	VU
9	Glareola nordmanni J. G. Fischer	Տափաստանային ծիծառակտցար	VU
10	Sterna albifrons Pallas	Փոքր ջրածիծառ	VU
12	Chlidonias hybrida	Սպիտակապտ ջրածիծառ	VU
13	Haematopus ostralegus Linnaeus	Կտցար-կաչաղակ	VU
14	Aquila nipalensis orientalis Hodgson	Տափաստանային արծիվ	VU

Տարածաշրջանում հանդիպող և Կարմիր Գրքում գրանցված կենդանատեսակներից որոշները ներկայացված են ստորև Նկար 10-ում:

<sup>6</sup>EN (*Endangered*) - վտանգված տեսակ,  
 VU (*Vulnerable*) - խոցելի տեսակ,  
 CR (*Critically Endangered*) - կրիտիկական վիճակում գտնվող տեսակ:

**Նկար 10. Տարածաշրջանում հանդիպող և Կարմիր Գրքում գրանցված կենդանատեսակները**



*Erinaceus (Hemiechinus) auritus Gmelin - Լայնակալնչ ողնի*



*Allactaga elater Lichtenstein - Փոքր ճագարամուկ*



*Phrynocephalus horvathi - Անդրկովկասյան տակիրային կրորագլուխ*



*Charadrius alexandrinus Linnaeus - Ծովային քարաղը*



*Glareola pratincola - Մարգագետնային ծիծառակոցար*



*Haematopus ostralegus Linnaeus - Կոցար-կաշաղակ*

Աշխատանքները իրականացվելու են Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցի տարածքում, որը երկար տարիներ գտնվում է մարդածին ազդեցության ներքո: Ուստի նախատեսվող

գործունեության տարածքը՝ կենսաբազմազանության տեսանկյունից չի հանդիսանում հազվագյուտ և վտանգված տեսակների կենսավայր:

### **8.9 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի համայնքների նկարագիրը և սոցիալ տնտեսական վիճակը**

Նախատեսվող գործունեության տարածքը՝ Մովսես Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցը, գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի Չվարթնոց թաղամասում:

#### **Վաղարշապատ քաղաք**

Մակերեսը՝ 4424.82 հա,

Բնակչությունը՝ 57600 մարդ,

Հեռավորությունը մարզկենտրոն Արմավիրից՝ 22 կմ,

Հեռավորությունը մայրաքաղաք Երևանից՝ 18 կմ:

ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 800-850 մետր բարձրության վրա: Քաղաքն ունի գլխավոր ճանապարհի դեպի մայրաքաղաք Երևան: Միացված է Երևանին գյուղերով: Քաղաքից դեպի Երևան մայրուղին 16-18 կմ է: Մարզկենտրոնից գտնվում է 22 կմ հեռավորության վրա: Չվարթնոց օդանավակայանից՝ 7 կմ հեռավորության վրա: Համայնքի վարչական տարածքը կազմում է 4424.82 հա, որից քաղաքի տարածքը՝ 852.24 հա: Քաղաքի տեղանքը հարթ է, թույլ թեքված դեպի հարավ-արևմուտք:

Հայաստանում քրիստոնեության գլխավոր կենտրոնը լինելու շնորհիվ՝ Վաղարշապատը դարեր շարունակ երկրի համար ունեցել է հոգևոր-մշակութային մեծ նշանակություն: Այստեղ են հիմնվում առաջին դպրոցը, մատենադարանը և ճեմարանը: Հենց այստեղ են Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը հիմնում հայալեզու առաջին դպրոցը: Վաղարշապատում է հիմնադրվում Հայաստանում առաջին տպարանը (1771թ.), թղթի գործարանը (1776թ.), պարբերականը (1868թ.), թանգարանը (1869թ.): Վաղարշապատում են գտնվում հայ ճարտարապետության գլուխգործոցներ Սուրբ Հռիփսիմե վանքը (618թ.), Սուրբ Գայանե վանքը (630թ.), Սուրբ Շողակաթ եկեղեցին (1694թ.), Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցին (1767թ.), Չվարթնոց տաճարը (641-661թ.): Այստեղ երկար տարիներ գործունեություն են ծավալել մշակութային կարկառուն գործիչներ, իսկ 20-րդ դարի սկզբին քաղաքը տվել է այնպիսի մեծանուն գիտնականներ և արվեստագետներ, ինչպիսիք են Մեծն Կոմիտասը, Սպիրիդոն Մելիքյանը, Մակար Եկմայանը, Եղիշե Թադևոսյանը, Հովհաննիսյանը, Մհեր Աբեղյանը և շատ ուրիշներ:

Վաղարշապատ քաղաքը ակտիվ համագործակցում է տարբեր քաղաքների միջազգային կազմակերպությունների հետ: Քաղաքը բարեկամական կապեր ունի Իսի լե Մուլինո (Ֆրանսիա), Շաղվիո Շավանիո (Ֆրանսիա), Ֆրեզնո (ԱՄՆ), Պետրոգավոդսկ (ՌԴ), Սերգիև-Պոսադ (ՌԴ), Վելիկո-Տրնովո (Բուլղարիա), Դաուգավպիլս (Լատվիա), Մարտակերտ (ԼՂՀ) և Հաղրութ (ԼՂՀ) քաղաքների հետ: 2007թ.-ից Վաղարշապատը ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային ժառանգության քաղաքներ» կազմակերպության անդամ է:



Բնակչություն

Վաղարշապատը Հանրապետության համեմատաբար մեծ քաղաքներից է, բնակչությունը՝ 57 600 մարդ, որոնցից տղամարդիկ կազմում են 48,5 %-ը, իսկ կանայք՝ 51,5 %: Քաղաքի բնակչության գերակշիռ մասը կազմում են հայերը: Քաղաքի բնակչության 8,4% -ը կազմում է եզրի ազգաբնակչությունը:

Բնակելի ֆոնդ

Վաղարշապատում կա 184 բազմաբնակարան բնակելի շենք 1392180քմ. ընդհանուր մակերեսով և 7422 բնակարաններով, բազմաբնակարան վթարային բնակելի 7 շենք 342 բնակարանով, 375 ավտոտնակ, 6629 առանձնատներ: Քաղաքի բնակարանային տնտեսության սպասարկումը (տանիքների վերանորոգում, ծխնետույզների մաքրում, ջրագծերի վերանորոգման, աղբահանություն, սանիտարիա և այլն) իրականացվում է քաղաքապետարանի բյուջետային հիմնարկ՝ Վաղարշապատի քաղաքապետարանի բնակարանային կոմունալ վարչության կողմից: Քաղաքում ստեղծվել են 5 համատիրություն, որոնք սպասարկում են 51 բազմաբնակարան շենք՝ 2292 բնակարանով:

Կրթական, մշակութային և առողջապահական հաստատություններ

Համայնքի տարածքում կրթական համակարգը ներառում է նախադպրոցական դաստիարակության, ավագ և հիմնական կրթություն, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության բնագավառները: Քաղաքում գործում են 12 հանրակրթական դպրոց, որոնցից 3-ը՝ ավագ դպրոցներ, 9-ը՝ հիմնական դպրոցներ, 1 հատուկ դպրոց, “Էռոնեկեան” հանրակրթական միջնակարգ դպրոց, Ռադիո դպրոց, գործում են 8 մանկապարտեզ, 1 մարզադպրոց, 2 երաժշտական դպրոց, գեղարվեստի դպրոց, 5 թանգարան, 2 մշակույթի տուն, “Հ. Հովհաննիսյանի անվան կենտրոնական գրադարան” ՀՈԱԿ-ը իր 7 տեղամասերով, Վ. Համազասպյանի անվան պետական քոլեջը և Գրիգոր Լուսավորիչ համալսարանը: Վաղարշապատի Մայր Աթոռին կից գործում է Գևորգյան ճեմարանը:

Արտադրական ձեռնարկություններ և սպասարկում

Քաղաքը նախկինում համարվել է խոշոր արդյունաբերական կենտրոն՝ իր տարածքում ունենալով ժամանակակից տեխնիկայով ու սարքավորումներով հագեցված այնպիսի հզոր գործարաններ, ինչպիսիք են “Ռասար”, “Էլեկտրոն”, Կարի և “Մարքաշինական” գործարանները, որոնք գործել են միութենական ռազմաարդյունաբերության համալիրի կազմում և թողարկել գերճշգրիտ սարքեր: Ներկայում արդյունաբերական ձեռնարկությունները տնտեսական կապերի խզման, ինչպես նաև ֆինանսական միջոցների բացակայության պատճառով կամ չեն աշխատում, կամ էլ գործում են իրենց հզորության 5-10%-ի չափով: Փոքր և միջին ձեռնարկությունները կարևորագույն դեր ունեն Վաղարշապատի տնտեսության զարգացման համար: Քաղաքում փոքր և միջին ձեռնարկությունները զարգանում են երեք հիմնական ուղղություններով՝ առևտուր, սպասարկում և փոքր արտադրություններ: Նախորդ տարիների համեմատ ընդլայնվել է հատկապես առևտրի ոլորտը: Ներկայումս այդ ոլորտում փոքր և միջին ձեռնարկությունները կատարում են կարևոր դեր՝ զբաղեցնելով մանրածախ շուկայի 85-90%-ը:

Նախատեսվող գործունեության վայրի և մոտակա բնակավայրերի տեղադիրքը, ինչպես նաև դրանց միջև ընկած հեռավորությունները, պատկերված են ստորև **Նկար 11**-ում:

**Նկար 11. Նախատեսվող գործունեության վայրի և մոտակա բնակավայրերի տեղադիրքը**



### 8.10 Պատմամշակութային և բնության հուշարձանները

Վաղարշապատը Հայաստանյաց Առաքելական եկեղեցու պատմական կենտրոնն է, որտեղ գտնվում է Մայր Տաճարը: Վաղարշապատում են գտնվում հայ ճարտարապետության գլուխգործոցներ Մուրբ Հռիփսիմե վանքը (618թ.), Մուրբ Գայանե վանքը (630թ.), Մուրբ Շողակաթ եկեղեցին (1694թ.), Մուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցին (1767թ.), Չվարթնոց տաճարը (641-661թ.):

Մայր Տաճարը կառուցվել է 303թ. հայոց կառուցողական արվեստի հնագույն ավանդների հիման վրա, խաչաձև կենտրոնագմբեթ ոճով: Տաճարը դարերի ընթացքում ենթարկվել է վերանորոգումների, հատկապես 484թ-ին վերակառուցվել է իշխան Վահան Մամիկոնյանի օրոք, 1658թ-ին՝ Փիլիպոս կաթողիկոսի ժամանակ կառուցվել է արևմտյան ճակատի մեծ զանգակատունը, իսկ 1869թ-ին՝ Գևորգ Դ կաթողիկոսի ժամանակ, կառուցվել է տաճարի թանգարանային մասը՝ արևելյան կողմը: Տաճարի ներսի որմնանկարները կատարված են 18-րդ դարում՝ պարսկական տիրապետության շրջանում, հայ նկարիչներ Հովնաթյանների դպրոցի ոճով: Մայր տաճարի շրջապատում են գտնվում մի շարք պատմական կառույցներ՝ Տրդատ թագավորի դուռը ( 7-րդ դար), Ղազարապատ՝ը (17-րդ դար), միաբանական Երեմյան շենքը (19-րդ դար), Հոգևոր ճեմարանի շենքը (20-րդ դարի սկիզբ), նոր վեհարանի շենք (1915-ին):

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում է գտնվում նաև Չվարթնոցի տաճարը և Մուսա լեռան հերոսամարի հուշահամալիրը:



Չվարթնոց տաճարը և նրան կից կաթողիկոսական պալատը կառուցվել է 641 - 661 թթ. հայոց Ներսես Գ Շինող կաթողիկոսի կողմից և միաժամանակ կոչվել է Սուրբ Գրիգոր տաճար: Այստեղ է ամփոփված հայոց եկեղեցու առաջին հայրապետ Գրիգոր Լուսավորիչի մատունը: Այս տաճարը եռաստիճան, ռոտոնդաձև, ուղղաձիգ առանցքի շուրջը հետզհետե նվազող, կլոր, բազմանկյուն կենտրոնագմբեթ 5 մուտք ունեցող 45մ. բարձրությամբ, մի անկրկնելի ճարտարապետական շինություն է եղել, որը շքեղությամբ զարդարվել է բուսական և երկրաչափական մոտիվներով կառուցված հյուրեղ որմնաքանդակներով, դեկորատիվ որմնաայտուներով և կամարներով: Տաճարը ավերվել է 10 - րդ դարի վերջերին՝ երկրաշարժից:

